

ԱՐԴՈՒ-ԼԵՐ


523

ԱՐՁԱԼՈՒՅՍ ՏԵՐ-ՀՈՎՆԱՆՅԱՆ

ՀԱՅՈՒՈ ՊՐԵՍԻԱ



1923



891.99

ԱՐՑԱԼՈՒԹՅԱՆ ՏԵՐ-ՀՈՎԱՆԱՑՆԵՐՆ


~~15299~~

A ~~II~~ 38842

ՀԱՅՈՒՆ ՅԱՆՑՈՒՅՑ

Տ Ա Ր Ա - Լ Ե Ր Ա

ՅԵՐԵՎԱՆ - 1923



11835185 No. 1700181

11835185

11835185

11835185

11835185

№ 1

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

„ՄԱՄՈՒԼԻ ԳՈՐԾԱԿԱԾՈՒԹՅԱՆ“

ՅԵՐԵՎԱՆ

Տեխնիկական տպագիր. 1923 Յերեվան. պատ. № 3559

Բուլլ. Դ. թ. Լ. վ. № 2891. Տիրաժ 500 սրինակ.

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Պատմություն չե, վոր ցանկացել եմ գըել
յես, ուստի և ժամանակագրական կարգը շատ
տեղերում կարող ե խախտված լինել:

Յես կամեցել եմ տալ պատերազմից առաջ,
պատերազմի, հեղափոխության և մեր «անկա-
խության» որերի գոյության, մտածելակերպի
ու «քաղաքականության» ընթացքը:

Յես կամեցել եմ տալ մեր «ղեկավարների»
ձեռքուժ ամուր պրկված մեր կյանքը, կապված
արտաքին աշխարհի հետ, լուսավորելով այն
լայն ու անհատակ անդունդը, դեպի ուր տա-
նուժ եյին մեզ թափալգլոր:

Կոնկրետ դեմքեր, դեպքեր ու վայրեր չկան:

Ամեն պատկեր համապատասխանում ե մեր
հիշողության մեջ արթնացող այս կամ այն ան-
ձին, վայրին ու դեպքին:

1923 թ. 1 սեպտեմբերի

Յերևան

1.

Անցնում եյին սովորությունների ու կարգադրությունների վրա հենված որերը դանդաղ։
Այսորը Կախորդում եր նույն ձեն ու սահմաններն ունեցող վաղվան։

Առանց փոփոխությունների։
Փոփոխությունները շփոթություն են առաջըերում։

Ստիպում են շարժվելու։
Ամեն մի շարժում պայմանավորված է մի նոր ձեի հետ։

Նոր ձեռքից մարդիկ վախենում եյին:

Մեր յերկրի մարդկանց կյանքն հայտնի եր.
ավելի ցածր աստիճանով նման բոլոր յերկրների մարդկանց կյանքին:

Ուրիշ տեղերում հիմք եր պրվում, կաղապարվում, իսկ մեղանում պատճեն հանվում:

Յեվ այսպես որն անցնում եր որվա յետեղ:

Ամեն առավոտ բազմաթիվ ուսուցիչներ
թեվերի տոկ առած հաստ-հաստ ձեռնակներ ու
աշակերտական տետրակների կույտեր, դպրոց
եյին շտապում:

Գնում եյին սովորեցնելու խոնարհել-հոլովել,
գոյական-ածական, բայ-մակբայ, համանիշ-
հոմանիշ:

Կամ՝ յերկու կետերի մեջ ամենակարճ ճանապարհն ուղիղ զիծն ե:

Յեվ կամ՝ ինչպես Մովսեսն իր գավազանով խփեց կարմիր ծովին, ծովի ջուրը յերկումասի բաժանվեց ու ճանապարհ բացեց, վորտեղով իսրայելի ժողովուրդն անցավ մյուս ափը, ինչպես Քրիստոսը ծնվեց կույս Մարիամից,

մեռավ, հարություն առավ, յերկինք բարձրացավ։

Հազարավոր մանուկներ ու պատանիներ լսում, առւն ելին վերադառնում, զըքերն առած բազմաթիվ անգամ կրկնում, անգիր անում, մյուս որը մեկեր չատանալու համար։

Պատրաստվում ելին կյանքի համար պիտանի մարդիկ գառնալու։

Զարգացած ու հավասարակշիռ։

Պաշտոնյաներն առավոտյան վաղ արթնանալով, մաքրում կամ ժաքել ելին տալիս հնամաշ հագուստները, պլազմանում հանդերձների մեծ-մեծ, դեղին ու սպիտակ նշանակիր կոճակները, գլխարկանիշերը, կոշիկները և հանդարտ քայլում դեպի պաշտոնատները։

Բարենում ելին պաշտոնակիցներին. բարձրերին՝ խոնարհաբար, ստորիններին՝ արհամարհական ու բազմում իրենց հատուկ տեղերում։

Զարմանալի յերկար նայում ելին այս ու այն թղթին. թվում եր, թե այդ թղթի վրա եղատկերացրած ամբողջ աշխարհի բախտը։

Գրիշը շարժվում եր շատ հանդարտ, ամեն

կերպ աշխատում եյին վործերը հետաձգել «վաղվան», ընդունելության սահմանափակ ժամերին ընդունում եյին առավելապես «հերթից դուրս» իրենց բարեկամներին ու մոտիկներին, վորպես «կարեոր» գործ ունեցողների։ Մի քանիսին՝ ավելի կարեոր խնդիրների համար՝ տեսակցության ժամ եյին նշանակում իրենց տանը։

Պարապմունքները վերջանալուս՝ յերբ տուն եյին ճանապարհում «մեծավորին»՝ տուն եյին վերադառնում, ընտանիքի հետ ճաշում, ապա իրենց առանձնասենյակներում «հանգստանում»։ Յերեկոները կնոջ ու հասակն առած աղջիկների հետ հյուր եյին զնում։ Կանայք և յերիտասարդները կազմակերպում եյին խաղեր, պարում եյին, յերգում։ Իսկ «հայրերը» մի այլ սենյակում «ժամանակ սպանում» թղթախաղի սեղանի մոտ։

Մինչ ընթրիք և ընթրիքի ժամանակ՝ առատորեն խմում եյին «հատուկ» սղատվիրած խմիչքներ, դովում տանտիրուհու անսահման բարությունն ու սիրալիրությունը, մեծ-մեծ ապագա դուշակում նրանց յերեխաներին, խոհարարի արգեստը դրվատում։

Խմում եյին կենացներ, արտասանում ամենապեղարվեստական վոճերից հլուսված ճառեր, յերգում խմբական ու առանձին յերգեր, վոգեվորվում և արտասվում եյին հայրենիքի, նըսհերոս զավակների ու տառապած ժողովրդի մասին խոսք յեղած ժամանակ:

Շատ խոսում ելին ու խոսելիս զեմքերին ծանրախոհ տեսք տալիս:

Գործակատարներն ու աշկերտներն առավոտյան վաղ հավաքվում ելին վաճառատների առաջ, խմբերով կանգնում, խոսում, հանաքներ անում միմյանց հետ, սուր խոսքեր նետում անցնող-դարձողների հասցեյին և յերբ հաստատուն ու հանդարտ քայլերով, ծանր շնչելով գալիս եր «խազեյինը», խոնարվում եյիր մինչև գետին, առնում խանութի բանալին, բաց անում և ըստ պաշտօնի կարգի, ներս մըսնում, պմեն մեկն իր տեղն եր քաշվում ու գործի կենում:

Մաքրում, ապրանքները գարակներից հանում, գարսում նոր ձեռվ և յերբ վերջացնում եյին, ձեռքերը խաչած լուս կանգնում, մուշ-

տարու եյին սպասում:

Աժքողջ որը յերդվում եյին, գովում, սուտ
խոսում, խարում, ներս մտած «մուշտարուն»
անպայման մի բան ծախում:

«Խազեյինը» նստած «դախլի» մոտ, յեր-
բեմն պայծառ, յերբեմն թթված դեմքով ստա-
նում եր դրամը և մտքի մեջ շարունակ հաշիվ-
ների հետ լինում:

Իրիկուն եր դառնում, լույսերը վառվում
եյին (մեր քաղաքն ուրիշ «մեծ» քաղաքների
նման յելեքտրական լույս ել ունի): «Խազեյի-
նը» հավաքում եր «դախլը», գոհ ժողով գըր-
պանը գնում, ծառայողները տեղերն եյին դար-
սում ապրանքները և յերբ վերջացնում եյին,
խանութը փակում ու ամեն մեկն իր տուն
եր շտապում:

«Խազեյիններն» ու կառավարիչները բա-
վական ուշ ժամանակ տնից դուրս եյին գնում
«ուստորաններում» առևտրական «կոմբինացիա-
ներ» գլուխ բերելու, ընթրիքի սեղանի շուրջ
«առևտր» անելու:

Գործակատարները փոխում եյին շորերը,
վերցնում ձեռնափայտը կամ հովանոցը և ան-

հոգ դեմք շինած, թեթև խաղ անելով, անցնում «բռւլվար», «պրոսպեկտ» զբունելու, «ըրտակից ընկերներին հանդիպելու, «որիորդներին «զադեվադ» անելու, ծանոթանալու նրանց հետ։

Գնում եյին պրոժեկտոր. շատ եր դյուք գալիս Պինկերտոնը, Շերլոկ Խոլմուր, վոգեվորվում եյին նրանց տրյուկներով։ Սիրում եյին կոմի-կական պատկերներ, ծիծաղում դահլիճով մեկ, բոթում միմյանց։ Աշխատում եյին կողքին նըս-տած ծանոթ կամ անծանոթ կնոջ թեվը բռնել, սեղմել, առաջարկում եյին կոնֆետ (գլխավո-րապես առետըի ժամանակ աննկատելի կերպով գրպանները զցած)։

Մեկմեկ ել որերի այդ դասավորությունը (յերեկոների նկատմամբ) այդպես չեր մնում։ Փոփոխության մեղքն ընկնում եր «ազնվաշուք» տիկինների և «հասակավոր» որիորդների վրա։ Յերիտասարդ աղջիկներին արգելվում եր։

Նըրանք ամենից առաջ պիտի ավարտեյին զիմնազիան, «մադամի» մոտ բարեի, նոտելու, ուտելու և այլ քաղաքավարական ձևերը սո-վորելին, վորպեսզի «գուեհիկ» չմնային։ հետո

մայլերի հետ այս ու այն ուժատառեղին, սրա
ու նրա մոտ (իհարկե իրենց դիրքին ու արժա-
նապատվությանը համապատասխան) հյուր
գնային, զբոսնեյին բուլվարում ու պրո-
պեկտում ու աշխատեյին հարմար «պարտյա»
կազմել և ամուսնանալ:

Մեծերի հետ լինել ու նրանց պես գործել
թույլ եր տրվում այն ժամանակ, յերբ «մարդու
գնալու» այդ միջոցները չեյին ոգնում, հույսը
շտու անգամ եր խաբում ու տարիքն անց-
նում եր:

Կին իր ֆիզիոլոգիական կառուցվածքով
որպես քնքոյշ արարած, հեռու ե բոլոր կոպ-
տություններից և վորովինետե «մերժել»ը կոպ-
տության նշան ե, ուստի նա յերբեք չի մեր-
ժում:

Մանավանդ յերբ «կարիք» ե աեսնում:
Իսկույն հուզվում ե և ցանկանում բարե-
գործություն անել:

Կազմակերպում ե բարեգործական յերե-
կություններ զանազան նպատակներով, հասարա-
կական գործունեության ընույթ տալով նրանց:
Ընդունված ե նոյնպես, վար այդ ընկերու-

թյուններին անպայման մասնակցեն տղամարդիկ «տոն» տալու և կանանց «գործելու» ժամանակ «կավալերություն» անելու:

Յեվ ահա, այդ ընկերությունները յերբեմն — յերբեմն սլատճառ եին դառնում յերեկոների դասավորության ընթացքը փոխելու մարդկանց համար:

Այդ այն ժամանակ եր լինում, յերբ կազմակերպում եին «բարեգործական» յերեկութներ, ներկայացումներ և «Ճեռքի վրա» տուսակներ ծախում:

Այդպիսի որելին քաղաքի մեծ մասն իրարացման մեջ եր լինում։ Զահել աղջիկներն ու տիկինները դեռ մի քանի որ առաջ նոր շորեր պատվիրած՝ զուգվում-զարդարվում եին, յերիտասարդները՝ գլխավորապես փաստաբանները, ինժիներները, բժիշկները՝ ֆրակներով ու այլ համապատասխան հագուստներով, շտապում եին լինելու թատերասրահը։

Այդ յերեկոներին սովորական գործերը մռացվում եին։

Բայց յերբեմն ավելի մեծ դեպքեր ել եին տեղի ունենում։

Հուր եր ստացվում, վոր այս ինչ որը դալու և այն ինչ բաձրաստիճան անձը,

Այդպիսի ժամանակ արդեն հուզմունքի մեջ եին լինում բոլորը և ամենից առաջ քաղաքի «հայրերը»:

Կարգի եին բերվում հիմնարկությունները, խիստ կարգապահության և քաղաքավարության դասեր եին ստանում պաշտոնյաներն իրենց իշխանավորներից, խրատներ եին կարդում մայրերն ու հայրերն իրենց զավակներին, ու... մաքրվում եին փողոցները:

Առուների ջուրը բաց եր թողնվում, ջրցանվում, ավելվում և ընդհանրապես «հյուրին ընդունելու» մաքուր տեսք եր տրվում:

Անասունների յերթեվեկությունն արգելվում եր: (Մեր պրոսպեկտով, շատ անգամ ել մայթերով անցնող անհասկացող անասուններն այնքան անքաղաքավարի եին, վոր չեին կարողանում հասկանակ, թէ փողոցում չի կարելի կեղտոտել, վոր դրա համար կան հատուկ տեղեր):

Յեզ յերբ «հյուրն» ընդունվում ու հանա-

պարհվում եր, վերջապես բոլորն ազատ շունչ
եին քաշում. անասուններն ել ազատվում եին
բանաղբանքից:


Մի ուրիշ, ավելի նշանավոր բան ել կար,
վորը մի կողմից «վախ» եր պատճառում, կա-
ռավարողներին «հանգստից» զրկում, մյուս
կողմից «յերազների» պատճառ դառնում ազ-
գասերների համար:

Մեր յերկիրը բաժնված ե տարբեր
պետությունների մեջ: Յեվ տարբեր պետու-
թյունների մոտ ժողովուրդը տարբեր դրության
մեջ եր գտնվում:

Յեվ ահա այդ վախ ու յերազներ պատճա-
ռող բանը նպատակ եր դրել իրեն մեր յերկիրը
միացնել, իսկ առաջին հերթին տաճիկներից
ազատազրել:

Շատ-շատ անգամներ գաղտնի «խմբեր» յեն
կազմվել ու սահմանն անցել «պատերազմելու»...
«հերոսաբար մեռնելու»...և թյուրք ու բյուրդ
ջարդելու:

Քանի՝ մայրեր լաց յեն յեղել ու «աշքերը
չուր կտրած» սպասել իրենց «հերոս» զավակ-



Ա 38842

II

Ների վերադարձին և փորովինետե նըանցից շատ
քչերն եյին հետ գալիս, ուստի մեր բանաստեղծ-
ները վորպես մխիթարանք, գովում եին նըանց
իրենց գրքերում ու թանաքե արցունքներով վո-
գեվորում ուրիշներին, թեթևացնում մայրերի
ցավն ու արցունքները:

Մխիթարում եին նըանց քաջագործություն-
ների ողասլաց նկարագրություններով:

«Ժեռոտ լեռան լեռ կատարից
Վայր սլացիր սեվ արծիվ...»

Ահա այսպես ու սրա նման եին անցնում
որերը մեզանում, այսպես ոգեվորվում ու պայ-
քարում, այս պայմաններում ծնվում ու մեռ-
նում մարդիկ, յերբ հանկարծ մի սարսափ ազ-
դող լուր ցնցեց վողջ աշխարհը, աշխարհի
հետ միասին նաև մեր յերկիրը:

Համաշխարհային պատերազմն եր դա, վոր
էր հանկարծակի թափով յեկավ որերի ընթացքը
և վորոշումների ու սովորությունների անշարժ
տրադիցյաներով ապրող մարդկանց կյանքը փո-
խելու:

2.

Զինակոչի յենթարկվածները խմբերով այս-
ու այն շրջանից, ուս ու այն գյուղից գալիս
եին ու գալիս, գնացքները լցված նրանցով,
անհընդատ գնում եին ու գալիս:

Մարդատարների յերթեեկության ժամա-
նակները փոխվել, վագոնները վեր եին ածվել
զինվորականի:

Առաջին հերթին տեղ եին ստանում զինվորա-
կաններն ու պատերազմի համար աշխատողները:

Քաղաքի կյանքն ավելի յեռուն է դարձել:
Վաճառականները վոտք ու ձեռք են ընկել:
Շարունակ ապրանք են դուրս գրում:

Մուշտարիների թիֆս ավելացել ե:

Փողն առատ ե. գների մասին վիճող չկա:

Ամեն ինչ պատերազմի համար:

Այդպես ասաց քաղաքային խորհրդի ձայ-
նավոր Արայոս իսայիչը:

Յերկար ժամանակ խորհրդի քննության նյութ եր դարձել քաղաքի անջրդի հողերի վուոգման խնդիրը, վորի վերջնական ծրագրի ու նախահաշվի կազմելը հանձնված եր ճարտարապետ Արկադիյ Իվանիչին՝ մեր մեծահամբավ ինժիներին, վորին պարտական ե քաղաքն իր վոճակոր շենքերով:

Յերբ նախագիծն ու նախահաշվիվը պատրաստ եր, դրվեց խորհրդի որակարգում, վերջնական հաստատման համար:

Նոր միայն իր բացատրական խոսքն եր սկսել ճարտարապետ Արկադիյ Իվանիչը, յերբ Արտյոմ Իսայիչը ընդհատեց, ըստ կարգի ձայն խնդրելով:

Նա կանգնեց հաղթականորեն և վոգեվորված, «յերկու խոսքով» ասաց, վոր նման հարցերի քննության ժամանակը չե հիմա. վոր յեթե փող կա, այժմ այդպիսի «դատարկ» բաների վրա չի կարելի ծախսել. Այժմ պատերազմ ե, ամեն ինչ պատերազմի համար, հայրենիքը վետանգի մեջ ե, պետք ե նախ նրա փրկության մասին մտածել:

Բոլորը ծափահարեցին:

Արկադիյ Իվանիչը խիստ բողոքեց։
Նախագահն հայտնեց, վոր նա իր կատարած աշխատանքի ու կրած նեղության վարձը կստանա։

Իվանիչը «ստիպված» յեղավ համակերպվել և ինքն ել հոգուտ «ամեն ինչ պատերազմի համարի» առթիվ ճառ արտասանեց։

Պաշտոնյաների աշխատանքն ավելի մեծացել եր, ժամերը փոխվել եյին ու պարապմունքները տեղի եյին ունենում «ըստ կարիքի»։

Իշխանավորները ավելի խիստ ելին։

Գլուխներն ավելի եյին խոնարհվում։

Հանցավորները պատժվում ելին «զինվորական որենքներով»։

Ընդունելության ժամերը հիմնարկություններից վերջնականապես փոխադրվել եյին աները, առանձնասենյակներում կամ ոեստորաններում, ընթրիքի սեղանի շուրջը։

Լրագրերն ամեն որ լուրեր ելին բերում. —

— Մեր զորքերը հաղթական գրոհով գրավեցին Հ.-ը։

— Համառ կոիմսերից հետո մեր զորքերը թշնամուց խլեցին բազմաթիվ թնդանոթներ,

գնդացիրներ, հրացան և այլ ուղմամթերք. Նույնպես և 10,000 դերի։ Մեր զոհերն աննըշան են։

Յերբեմն ել. —

— Ուղմական նկատառումներով մեր զորքերը թողեցին №-ը։

Թշնամու ուժի դերազանցության արնորհիվ, մեր զորքերը քաջաբար նահանջեցին. Նահանջը շատ կանոնավոր եր։ Թշնամու կորուստներն ահագին են, մերը՝ աննշան, վերջնական հաշիվը դեռ չի պարզված։

— Զորապետ Խ-ը պարզեվատրված ե վոսկե թրով ու Գյոյըզյան առաջին աստիճանի խաչով։

Շաբաթը մեկ անգամ թերթերում տպվում ելին ցուցակներ սպանվածների, անհայտ կորածների ու վիրավորների։

Այդ ցուցակներն ամենից շատ ելին կարդացվում։

Բարեգործական յերեկութների թիմն այժմ տվելի ե։

Կանայք մի ըսպե դադար չունեն:

Կառքերը սեծ մտստմբ նրանց և տրտմա-
դրված:

Մեկ ժողով, մեկ այս ու այն սիրողի, գը-
րողի, բանաստեղծի, դասախոսի մոտ, մեկ փոր-
ձասրահ, մեկ անուշարան, մեկ ել դերձակու-
ու մոտ, նոր յերեկույթի համար նոր հագուստ-
կարել տալու:

Այսորվա յերեկույթը խրամատներում յե-
ղած զինվորներին ընծաներ ուղարկելու համար
և կազմակերպված:

Յեղանակը թեև վատ ե, բայց սրահը լի յէ
բազմությամբ:

Ամեն կողմ փայլում են բաց կրծքեր ու
թեփեր, սև ֆռակներ ու ոսլայած սպիտակ շա-
պիկներ:

Ծաղկեջրերի անուշ բույրն ե տարածված
չորս բոլորքը:

Յերկու նշանավոր սյուբարիդ կա այսոր.—
յերեկույթի բացման խոսք ե ասելու նշանավոր
հոետոր և «դուշկա» Սերյոժան կամ Սերգեյը կամ

Սերգեյ Նիկիտիչը և ցիգանական ռոմանսներ և
յերգելու մայրաքաղաքից հյուր յեկած Ասյան:

Այս սյուրպը իզների համար պարտական ենք
ընկերության նախագահ Սուսաննայի անդուլ աշ-
խատանքին:

Ահա և ինքը: Շըջում ե, նայում, կարգա-
դրում, բարեում հյուրերին, ժպտում դյութող:
Ոգուող մեծ ե. առևտուրը հաջող:
Շամպայնի սեղանն ամենից մեծ գումա-
րըն ե հանել:

Տիկին Մանիկի վոքը իկ ձեռքի ափից շամ-
պայն խմելու ցանկությունը շատերն ունեցան
ու թանգ եր զնահատվում:

Իսկ Լյուսիկի համբուլը աճուրդն ուղղակի
անյերևակայելի ֆուրոր և զրադանների մրցում
առաջ բերեց:

Շատերը ցանկացան համբուրել նրա հյու-
թալի և կրքոտ շուրթերը:

Լյուսին նստել ե բեմում միանգամայն ան-
վրդով ու զրգուիչ ժպտում ե. չե՞ վոր նա իրեն
դոհում ե տանջված զինվորների համար:

Ամեն ինչ պատերազմին:

Զինակոչը շարունակվում է:

Կանչվում են ավելի բարձր տարիք ունեցողները:

Ցուցակներն ավելի ու ավելի յերկարում են,

Մարդատար վագոնները փոխարինվում են նրանցով, վորոնց վրա մակագրված ե. — «8 ձի կամ 40 հասարակ զինվոր»:

Զինվորական յերաժշտախումբն ավելի ըստեպ ե քայլերգեր նվազում փողոցներում:

Հաճախորդների թիմս ավելի յե մեծանում:

Բուլվարում զբոսանքներն ավելի յերկարատեվ են:

Քաղաքային վարչության նիստերն ավելի ուշ-ուշ են հրավիրվում:

Հայրերն ավելի շատ են մտահոգված զավակներին թիկունքային աշխատանքների պահելու համար:

Գյուղերում աշխատանքները մնացել են: Աշխատող ձեռքերը պակասել են:

Կանայք չեն կարողանում տղամարդուն հատուկ գործերը կատարել:

Տանուտերը շարունակ նոր-նոր հրամաններ ե ստանում ու ինքն ել հրամայում:

Իշխանավորներն ավելի խստացել են. շա-

բունակ միմյանց հետ քիթ քիթի խոսում, խորհրդակցում են,

Հեռագիրը թռչում ե.

Բելգյան համառորեն դիմադրում ե,
Ֆրանսիայի նախապատրաստված չլինելու պատճառով, գերման—ավստրեական առաջին ամենածանր հարվածն իշնում ե ճամփա բաժնում կանգնած Բելգեայի գլխին.

Բելգեան ավերվում ե,

Կործանվում ե հիմնովին,

Հեռածիդ թնդանոթների գնդակները քանդում են պատմական ու գեղարվեստական հուշարձանները, շենքերը,

Տեվտոն զորքերը թալանում ու իրենց յերկիր յեն ուղարկում ամեն ինչ:

Բելգեայի կանայք բռնաբարվում յեն, յերիտասարդներն ու մանուկները դերվում, կոտորվում.

Բելգեան արդեն ավերակ ե.

Գյուղերն ու քաղաքները բռւերի բնակավայր յեն դարձել, գործարանները կանգ առել, դաշտերը խոպանացել:

Սով ե:

Ժողովուրդը գերման ռազմի բազկից սլաշտանվելու հնարավորություն չունի:

Գաղթում յեն:

Վողջ յերկրի ժողովուրդը յելած, գնում է:
Բելգեայի թագավորն անձամբ անցած զորքի գլուխ, կովում ե հերոսաբար:

Թագավորն ու զորքը յերկրից դուրս յեկան:
Թագավոր, առանց յերկրի ու ժողովրդի,
ուրիշ պետության մեջ թագավորական թագով
շրջում ե ու իր կորուստը սգում:

Բելգեան ել չկա:

Աշխարհի ամենաքաղաքակիրթ, աշխնիկա-
պես բարձր կուլտուրա և հարստություն ունե-
ցող յերկրի ժողովուրդը կորցը ել ե ամեն ինչ
ու վողորմություն ե հայցում ուրիշների դրս-
ներում:

Մակաղած այս ու այն անկյունում, այս
ու այն «բարեգութի» խնամքով քաշ ե տալիս իր
գոյության մնացորդը:

Ամիսներն անցնում յեն միմիյանց յետեից,
Պատերազմն ընդունակում ե ու խորա-
նում,

Նոր պետություններ ել շահագրգում յեն

ու հրապարակ իշնում։

Կազմվում յեն խմբավորումներ, համակիրներ։

Գործարանները շտապ կարգով ռազմական պատվերներ յեն կատարում։

Աշխատանքի ժամերն ավելացել են բանվորները համարվում են զինակոչվածներ։

Յերկաթուղիները զինվորական դրության մեջ յեն։

Գորոդովոյների ու ժանդարմների թիվն ավելացել ե։

«Ախրանկան» ուժեղացված է. գործակալները վիստում են ամեն կողմ։

Քանի մեծ-մեծ պետություն ե նետվում պատերազմի գիրկը, այնքան շատ են ուրախանում Սիմոնը, Գեվորգը, Ասոն, Ավոն։

Սպասում են Տաճկաստանի հրապարակ գալուն։

Տաճկաստանը պիտի մամնակցեր պատերազմին։

Այդպես եր իրերի դասավորությունը։

Ամեն ինչ պատրաստ եր։

Ասոն ու Ավոն կարգադրել եին։

Բուսական կառավարության պատճառած

Նեղությունները, բանտն ու աքսորը մոռացվել
եին. այժմ նա ե միակ փրկիչը:

Պատերազմը շարունակվում ե:

Ցուցակներն ավելի ու ավելի մեծանում են:

Ասոն ու Ավոն ուրախ են:

Ասոն ու Ավոն գործում են:

Նահանգապետն ու Ժանդարմները այդ մասին ամեն բան գիտեն, բայց չտեսնելու են տալիս:

Այդպիսի կարգադրություն են ստացել:

Ամեն ինչ պատերազմի համար. կեցցէ
հարենիքը, կեցցէ մեր պաշտպան գորքը:

Ակումբներն ավելի յեռուն են:

Յերեկույթներ կազմակերպվում են ավելի
հաճախ:

Ասոն ու Ավոն վոգեորված են:

Հասել ե ժամը:

«Ժողովուրդը» պատրաստ ե ամեն ինչ դո-
հաբերելու:

Սահմանի այն կողմից պիտի ապահով լինել:

«Մերոնք» ըստե առ ըստե սպասում են:

Գյուղերում աշխատող ձեռքերի պակա-

առւթյուն եւ:

Կանայք ուժասպառ են յեղել:

Դաշտերի մի մասը անմշակ եւ:

Ծերերը գլուխները կորցրել են:

Դժվար եւ, դժվար:

Վերջապես:

«Կամոքն Աստուծոյ մենք, Նիկոլայ Ա, կայսր
Ռուսյո, մեծ իշխան և այլն և այլն, պատե-
րազմ ենք հայտարարում Տաճկաստանին»:

Ասոն ու Ավոն ցնծում են:

Շտապում են, գործում են:

Հայտարարվում եւ ավելի մեծ տարիք
ունեցողների զինակոչ:

Զինակոչ են հայտարարում Ասոն ու Ավոն,

3.

Գնացքներն ամեն որ զորքեր են բերում:
 Սիրիոս, Ուրալից, Դոնից, Կազանից գորշ
 շորերում փաթաթված զորշ մարդկանց հսկա
 բազմություն 50-60-ով լցված ամեն կողմից
 փակված վագոններում, քշվում են կովկաս,
 տաճկական սահման:

Վագոններում տիրում ե յերգը, քրքիջն ու
 սրախոսություններն, իրենց անբաժանելի հա-
 մեմունք հայիոյանքով:

Իսկ պնացքն աղմկում ե. —

— Գնում ենք, գնում ենք, հասնում ենք,
 հասնում . . . հա հասանք, հա հասանք . . .

Գնում են նոր յերկրներ տոնելու, զենքով,
 զոռով խլելու:

Ասոն ու Ավոն ցնծում են.

Ասոն ու Ավոն գործում են,

Ամեն կողմից հավաքվում են կամավորներ՝
հպարտ, ինքնազոհ, մեծ թափով:

Կողքից մառագեր, կրծքին փամփուշտա-
կալներ մի քանի շարքով, խենչարը կապած,
կողքին հրացան (անպայման կարճ), գլխին յեր-
կարամազ փափախ:

Կայծեր են թափվում նրանց աչքերից, քայ-
լելուս թեվերը լայն թափ են տալիս կամ թե
մտրակը շաջում աջ ու ձախ:

Հայրենիքը կանչում ե:

Ասոն ու Ավոն հրաման են տվել:

Ու ամեն կողմից խմբերով յեկել, գնդեր
են կազմել, մարզանք են անում ու սահմանն
անցնում:

Խոչ ու խաչվառով որհնում են նրանց անց-
նելիք ճամփան, վոր սուրը կտրուկ, աջը զորա-
վոր լինի և թշնամին կենդանի շաղատվի:

Հայրենիքի պանծալի հերոս կլինի նա, ով
շատ կոտորի, ով շատ ավերի:

Ասյան կրկին մասնակցում ե համերգին:

Դահլիճը բերներերան լի ե հասարակու-
թյամբ:

Նրան ծափահարում են:
 Ավացիաներն անվերջ են,
 Ավոյի ինքնազնացը դրսում սպասում է:
 Միասին սլանում են նշանավոր ռեստորանը
 ընթրելու:

Սեղանի վրա բուրդեր են կազմում ուտե-
 լիքներ ու խմելիքներ:
 Սպասավորները թռչունի պես արագաթոփչ
 են:

Կեցցե՛ կամավորները, կեցցե՛ հայրենիքը:
 Նախազահուհի Սուսաննանա յլաս աանը մնա-
 լու վոչ մի հնարաւորություն չունի:
 Բազմաթիվ գործեր կանչում են նրան:
 Յերեխաների ինսամքը վերջնականապես
 հանձնել ե դայտակին:

Կիրակի է: Գեղեցիկ ու յերխասարդ որի-
 որդները կտվալերների հետ, կը քըներին զանա-
 զան գույնի ժապավեններ, զանազան մակա-
 զրություններով, նույնպիսի մակագրություննե-
 րով թղթի կտորների դամբյուղը ձեռներին, աջ
 ու ձախ անցնողների կրծքերին են ամրա-
 ցնում ու դրամ հավաքում. —

— Կամավորների համար հիփանդանոցներ
կազմակերպելու:

Առաջին հաղթանակների լուրը արագու-
թյամբ թոշում ե ամեն ուր:

Կամավորները միշտ յեղել են առաջին շար-
քերում:

Այդ առթիվ շնորհակալությունն ե ստացվում
ումից վոր պետքն ե:

Ասոն ու Ավոն յերջանիկ են:

Վերջապես զործնականում տպացուցիեց,
վոր հասել ե ժամը հայ ժողովրդի տպատագրման:
Համարձակվում են դեռ ոպազողիցիա կազմել
ժողովրդից «ընտրված» խորհրդում:

Ապուշներ են դրանք, ուրիշ վոչինչ:

Այդպիսիներին պետք ե մեջտեղից «վեր-
ցնել»:

Ասոյի մի վոտն այստեղ ե, մյուսը՝ խոր-
հրդում:

Ավոյի մի վոտն այստեղ ե, մյուսը՝ ճակտ-
ում:

Փողոցներում խրախճանք. ե:

Յրաժեշտախումբը նվազում ե:

Զինվորները քայլերթով անցնում են:

ԳԵՆԵՐԱԼՆ ԸՆԴՈՒՆՈւմ Ե ՀՔԵՐԹԸ,

Հասարակությունը ցնծում է:

ԳԵՆԵՐԱԼԻՆ ՃԵՌՔԵՐԻ ՎՐԱ առած, բարձրացնում են իր ընդունարանը:

Կամավորները համբուրվում են:

ՅԵՐԵԿՈՅԱՆ հրավառություն ե:

Բուլվարը լեցուն ե:

ԳԻԹԱԳԻՍՏԿԱՆԵՐՆ ու դայանուշկաները
ՀՐՋԱՊԱՏԵԼ յեն «գուշկա» սպաներին ու կամավորներին:

Մալաներն ու կամավորները բոլորովին չեն
ձնշվում:

Ամեն ինչ պատերազմի ու հայրենիքի համար:

Տրվում ե կյանք, փոխարենը մարմին վերցնելով:

Մարմիններն առատ են:

Լինում են արցունքներ, հուսահատություն,
բայց շուտով անցնում ե:

Շատերն առավույյան այդը հանդիպվում
են «Անդլյական» այգու և բուլվարի ծառերի
տակ:

Բոլորը զոհվում են հայրենիքի համար:

Մահմանը մոտ եւ
Զորքի թիւն, որե որ ավելանում եւ:
Մատակարարման անսահման ասպարեզ է
բացվել:

Թիկունքում հավաքվել յեն անթիվ մեծ ու
փոքր մատակարարողներ:

Նշանակված եւ աճուրդ փակ ծրարներով:
Նստել խորհրդակցում ու բաց յեն անում
ծրարները:

Բայց վոչ մեկի մասին չի խոսվում:

Չեն ճանաչում...

Գրավականներ կան, առաջարկները գործ-
նական են ու արժեքավոր, բայց...

Նեղ գրությունից հանում եւ պարենտյին
բաժնի վարիչը:

—Գեվորգը ցանկանում եւ վերցնել խոտի
ու գարու մատակարարումը, —ասում եւ նա, —
բայց յերբ իմացավ վոր փակ ծրարներով եւ ա-
ճուրդը, հրաժարվեց մասնակցելուց: Ո՞վ դիտե
ում հետ յեն չափելու ինձ, ասաց նա ու դի-
տում չարով:

Նա վստահելի եւ:

Հանձնենք նրան:

Համաձայնվեցին բոլորը, ստորագրեցին ու
շատով դուրս յեկան, մեկը մյուսից առաջ
տեսնելու Գեվորգին ու շնորհավորելու...

Պարենային բաժնի վարիչն ուրախությու-
նից շփում ե ձեռքերը:

Յելիզավետա Իվանովնայի կազմակեր-
պած յերեկոյթի համար կնոջ ու չորս աղջիկների
նոր հագուստներն աղահաված ե:

Թե չե խեղղվիր, բայց առ, իսկ փող...

Զկա:

Շտապում ե կնոջն ուրախացնելու:

Բնտանիքը յերջանիկ ե:

«Ճ ձի կամ 40 հասարակ զինվոր» մակա-
զրությունն անեցող բազմաթիվ վագոններ, ա-
ջևից անենալով շոգեմեքենան, հետեւից բժիշկ-
ներին ու գթության բույրերին հատկացրած Լ
կարգի վադոնները, ուազմաճակատից հանդարտ
սողում ե հետ, դեպի քաղաք:

Այլեփս նվագ ու յերդ չի լսվում:

Անքում են ու հառաջում:

Թշնամու գնդակների զոհերն են. ծանր ու
թեթև վիրավորներ, վոր առաջին ոգնությունից
հետո ուղարկվում են քաղաք, բժշկելու:

Դիմավորելու յեն զնացել կառավարության,
զինվորական, հասարակական և Ասոյի ու Ավոյեր
բազմաթիվ ներկայացուցիչներ, իրենց հետ ու-
նենալով յերաժշտախումբը:

Վոչ վոք տխուր չե նրանցից:
Վոգեվորված յեն բոլորը:
Գնացըը հասավ:
Բարձրաձայն ու բաղմաձայն կեցցեները
լցնում են ողը:
Յերաժշտախումբը նվազում է զինվորական
մարդ:

Բաղաքաղլուխը ճառ ե ասում:
Յերաժշտախումբը նվազում է կտյսերական
որհներգ:

Ավոն անմահացնում ե տնքացող վիրավոր-
ներին:

Յերաժշտախումբը նվազում է Անգրանիկի
յերդը:

Վոգեվորությունից հուզված են բոլորը:
Կանայք արտասվում են:
Կայարան յեն յեկել նաև ոազմաճակա-
ռում յեղածների հարազատները:
Գնառում են, հարցնում:

Գանողները ախրում են:

Զգանողներն՝ ուրախանում:

Շատերն իրենց հարազատներին առած,
տանում են իրենց հետ, ավելի լավ խնամելու:

Անտերները մնում են:

Անտերները շատ են:

Բերված են Սիբիրից, Ուրալից, Դոնից,
Կազանից:

Գալիս են վիրավորներով լեցուն նոր ու
նոր գնացքներ:

Հիվանդանոցները քիչ են:

Կաղմակերպվում են նորերը. ավելի մեծերը:
Նախադահուհի Սուստնան հիմնում ե իր
ոեփական հիվանդանոցը:

Շտապով մաքրում են բնակարանի ներքին
հարկի չորս սենյակները:

Ամուսինը գրասենյակը տեղափոխում է
վերև:

Ուր վոր տեղից բերվում են մահճակալներ,
սոլիտակեղեն, հավաքվում են բժիշկեր, բու-
ժակներ, բույրեր:

Սուստնան իր համար պատվիրում է քրոջ
հագուստ, կրծքին մեծ, կարմիր խաչ:

Կատարվում է հիվանդանոցի հանդիսավոր
բացումը:

Յեպիսկոպոսն որհնում է խաչ ու խաչվառվ։
Ավոն ճառում է։

Նախաճաշի սեղանը շրջապատվում է հյու-
րերով։

Ճառեր, կենացներ։
Կեցցեն կամավորները։
Կեցցեն ոռւսի հզոր բազուկը, մեր պահա-
պան աջը։

Գեներալը պատասխանում է։
Ափոն շնորհակալություն հայտնում։
Կամավորներից թեթև վիրավորների մի մա-
սին տեղափոխում են այդտեղ։

Դթության քույրերի և բուժակների թիվը
ուղմանակատում ըիչ է։

Բացվում են կուրսեր։

Գիմնազիստկաներն ու Գայանուշկաները ըշ-
տապում են սովորելու, վոր շուտով ուղմանա-
կատ մեկնեն . . .

Այնտեղ կարիք կա, այնտեղ մարդիկ զոհ-
վում են հայրենիքի համար, ամոթ և այստեղ
մնալ։

Ու զնում են:

Ասյան մեկնում եւ ուղմաճակատ:

Նա դթության քույր է:

Շատ սաղ է գալիս նոր հաղուսար:

Տեղավորված եւ սպայական վագոնում:

Ամեն հարժարություն ունի:

Անհամբեր սպասում եւ տեղ հասնելուն:

Յերեկոյանում է:

Մութն է: Կուպեյում ողլ ծանր: Յելնում
եղուան մոտ:

Մոտենում է մի սպա: Խոսում են:

Միտսին մտնում են սպայի կուպեն:

Լուսազեմին դուրս եւ յելնում, մազերն ար-
ձակ, հազուսար կիսակոճկած:

Շատապով սահում ելիս կուպեն ու հանգիստ
քնում, մինչև տեղ հասնելը:

Ասյան ուղմաճակատումն է:

Գործ չկա դեռ: Յերկու կողմից ել դա-
դար եւ Մեկ մեկ միայն հետախույզներ են հան-
գիպում միմյանց:

Խազմաճակատում ել կարելի յեւ շուքով
ապրել:

Նույն սպաներն են, ճիշտ եւ, քիչ կոսկա-

ցած, բայց այդ կիստվայրենությունն ավելի
լավ է ու սազ և գալիս շրջապատին:

Գյուղեր ու քաղաքներ ավերակ են: Յեր-
քեմն-յերբեմն յերկում են ծերունիներ և անտեր
մնացած քաղցած շներ ու կատուներ:

Հարձակման հրաման ե ստացվում:

Խրամատներում յերկար ժամանակ անգործ
ողարկած զինվորներն ուրախանում են:

Ենդհարումը համառ ե յերկուստեք:

Յերկու կողմից ել հրամայված ե դիրքերը
գրավել:

Ոգնական դորքը ուշանում է:

Աչ թեր կորված է, վոչմի տեղեկություն չկա:
Զախ թեր նոսրանում է. հոգնած են:

Կենտրոնը գիմում ե գրոհի:

Խրամատներից յելած, զնդակների տորա-
փե տակ վազում են, ընկնում, հառաջում:

Բռնվում են միմյանց. հոշտում:

Յերկուսից մեկի մահն ե պահանջվում . . .

Կովից բավական հեռու յեղած դոշտային
հիվանդանոցը լցված ե վիրավորներով:

Բժիշկները փորձված ու հմուտ մսագործ-
ների պես սուր դանակներն առած, կտրում

գեն են դցում մարդկային փշրված վոտքեր,
ձեռքեր, թեվեր . . .

Բուժակներն ու զթության քույրերը դա-
դար չունեն. հոգնել են:

Հառաջանքները ու տնբոցները սաստկանում,
բազմանում, բռնում են չորս բոլորքը:

Թշնամին քշված ե. հաղթանակը մեծ ե:
Վիրավորների խմբերն ավելի մեծանում են:
Դադար ե:

Հավաքում են սպանվածներին:

Փորում են մեծ մեծ ու խորը մի քանի
փոսեր, լեցնում մեջը, ծածկում և ամեն փոսի
գլխին խաչափայտ ամրացնում:

Քահանան կտտարում ե թաղման կարգ,
հայրենիքի համար զոհված հերոսներին արքա-
յությանն արժանի անելու համար:

Յեղբայրական գերեզմանների թիվը ավե-
լանում ե:

Ասյան աշխատում ե. սարսափածե ու հոգնած:

Նա թույլատվություն ե ստացել դիշերը
հանգստանալու:

Պարկում ե անկողնուն առանց հանվելու և
վերջնականապիս թուլացած, անշարժանում:

Զգում եւ ու հասկանում, վոր իզուր եւ այդ
առևենը:

Վոր ավելորդ եւ իր արածը . . .

Ավելորդ եւ իր վողեվորաթյունը:

Ավելորդ եւ նույն իսկ ինքը:

4.

Ուռատանկական պատերազմն արդեն հայտարարված է:

Տաճիկներն ել վողեվորված են:

Կյանքը յեռում է:

Պատրաստվում են:

Բազմական նախարարը զեկուցում և կարգում նախարարական խորհրդում:

Առաջարկներն ընդունվում են:

Շափահարում են:

Սուլթանը հաստատում է:

Գերման ժամանգետները դործի են անցնում:

Նեղուցները ամրացվում են:

Նեղուցները փակվում են վոչ դաշնակից պետությունների նավերի տուժ:

«Զայչիխանաներում», «Քարվանսարաներում»
ու «մեյզաններում» մարդիկ ծալողատիկ նըս-
տած գորդերի վրա, անվերջ հորաննջում, թեյ
են խմում և դատողություններ անում։

Վոչ մեկը կառկած չունի իրենց հաղթա-
նակին։

«Ալմանը» իրենց հետ եւ
«Ալմանը» ջնջեց Բելգիան, «Ալմանը» վո-
շընչացնում եւ ֆրանսիան, «Ալմանը» հզոր եւ . . .

Ենվեր փաշան զորքի հրամանատար եւ

Ենվեր փաշան սատանի պես ճարպիկ եւ

Ենվեր փաշան անհաղթ եւ

Կեցցե՛ Ենվեր փաշան։

Կեցցե՛ հաղթությունը։

Ու նստած «Հայչիխանաներում», «Քար-
վանսարաններում» ու «մեյզաններում», քա-
ղաքների և գյուղերի «աղսախկալները» գիտում
են իրենց «ջահելիերին», վոր խումբ - խումբ
հավաքված, զինավարժվում են ու մեկնում
ուղմանակատ ուսուին կոտորելու։

Համում են առաջին լուրերը։

Տաճիկ զորքը քաշվում եւ

Թուսներն առաջ են շարժվում։

Բայազետը ոռւսների ձեռքն է:

Տաճիկների զոհերը մեծ են:

«Ալմանի» ողնությունը չնպաստեց:

Ենիքերը չփրկեց:

— Պատճառը:

Մահմանի այս կողմը հայեր են ապրում,
այն կողմից զորքի առաջապահ զունդը հայ կա-
մագորներն են:

Դավաճանություն:

Ներքին և ռազմական գործերի նախարար-
ները խորհրդակցում են:

Խօրհրդակցությունը կարճանե է, վճիռը
վորոշ:

Հայերը միշտ դավաճան են, հայերի ներկա-
յությունը վտանգավոր է:

Տաճիկ ժաղովուրդը ովիտի ազատվի հայե-
րից:

Տաճկաստանը պիտի մաքրվի:

Տաճկաստանը միայն մահմեդականներին:

Կեցցե մահմեդականությունը:

Կեցցե հավատը:

Ներքին ու ռազմական գործերի նախարար-
ները զեկուցում են կարգում նախարարական
խորհրդում:

Ծով ե նըանց խելքը:

Տաճկաստանի փրկիչներն են:

Առաջարկն ընդունվում ե. —

— Հայերին զաղթեցնել:

Մուլթանը հաստատում ե:

«Ալմանը» դեմ չե:

Ենվեր փաշան գործում ե: Հեռաղիքը հադուդում ե վալիներին կառավարության վորոշումը:

Մուրհանդակները հաղորդում են վալիներին. Ենվերի ծրագիրը:

Վալիները հասկանում են. իրանք խորհըդակցում են:

Մոլաները վոդեվորված են:

Կրոնի փրկության ժամը հասել ե:

«Անհավատի» արյունը մաքրում ե հավատացյալին ու «Չեննաթի» փերիներին արժանացնում:

Ալլահ, ալլահ . . .

Հայերն զգում են շարժումը.

Հայերը հասկանում են զալիքը:

Նրանք շատ լավ գիտեն մոլլաներին: Լովեն ճանաչում փաշաների ու նըանց մարգիկանց կառագությունը:

Մոլեռանդության պտուղը յիրկար ժամանակ ճաշակել են:

Հավաքվում են ծածուկ, խորհրդակցում:

Պատգամավոր են ուղարկում սահմանի այս կողմը հայտնելու իրենց դրությունը, խընդում են վերջ տալ «կամավորական» խմբերին.

Թող նրանք մասնակցեն զորքի հետ խառը, վոչ վորուես հայկական խմբեր:

Ասոն ու Ավոն բարկացած են:

Ինչպես կարելի յէ ձեռքից բաց թողնել «մոմենտը»:

Խելագարություն ե:

Հասել ե ժամը:

Թող իրենք ել խմբեր կազմեն, բարձրանան սարերը, ներքին ակստամբություն առաջ բերեն:

Թող քիչ ել դիմանան,

«Կամավորները» կովում են «առյուծի» պես:

Նրանց թիվը հարյուր հազարների յէ հասնելու:

Գալիս են ամեն կողմից. —

— Ամերիկայից, Ֆրանսիայից . . .

Շուտով ամբողջ Տաճկաստանը հիմնիվեր կը կործանի:

Թող համբերեն. պատերազմը շուտով կը
վերջանա:

Ասոն ու Ավոն ճառում են:

Ասոն ու Ավոն դայրացած են սահմանի
այն կողմի հայերի այդ «տնխոհեմ» առաջարկից:

Պատշամավորը վերադառնում է:

Պատասխանը բացասական է:

Այլևս ամեն ինչ կորուծ է:

Նստել ու սպասում են գալիքին:

Ու սկսվում է:

«Դիմանալու» ժամանակ չեղափ այլևս:

Սահմանամերձ շրջանի մի մասն անցել ե
հաղթողի ձեռքը, իսկ մյուս մասը սարսափ ե
աղբաւմ:

Սարսափ են աղբում սահմաններից շատ
հեռու ապրող հայերն ել:

Հրամայվում ե պատրաստվել:

Տանելու յեն յերկրի խորքերը:

Ու պատրաստվում են:

Քչերն են կարողանում փախչել:

Մյուսները հլու հնազանդ, թողած տմեն
ինչ, յերեխանների ձեռքից բանած, հավաքվում
են նշանակված տեղերը:

Զինվորները արջապատռւմ են ու քշում։
Անհուն, անվարտատելի թախիծով նայում
են իրենց տներին, իրենց դաշտերին, ուր այլ-
և վերադարձի հույս չկա։

Հրաժեշտի խորը հառաջանքով են նայում
շողշողուն արևին, վորին տեսնելու յերկար չե-
մացել իրենց։

Մահվան դատապարտված՝ քայլում են։
Գիտեն, վոր վերջին ըոպեներն են ապրում,
ՅԵՐՔ և ուր ե հասնելու մահը . . .

Արդ սպասումի սարսափով քայլում են։
Մեծերը գիմացկուն են ու համբերող. մե-
ծերի մարմինն ավելի շուտ ե կոշտանում ու
սիրտն ավելի արագ անըզգայանում։

Մանուկները փոքրիկ են, չեն կարողանում
քայլել։

Ծնողներն այլիս ուժ չունեն գրկած տա-
նելու նըանց։

Մանուկները ճետ են մնում։

Մանուկները նվազում են :

Քաղցած են։

Քայլում են որերով և ուտելու վոչինչ
չունեն։

Շոգ եւ անապատային արելը խանձում եւ:
Զուր չկա. ծարավը թուլացնում եւ:
Ու մեռնում են. մեռնում են մանուկները
Թառամում ու խամրում են կյանքի ծա-
ղիկները:

Թողնում են ճանապարհի յեզրերին նրանց
խամրած, փոքրիկ մարմինները, անմիտիթաք
բաժանվելով, քայլում են ծնողները ցավալի հա-
ռաջանքներով:

Մարդկային կիրքն անսահման եւ.
Ամեն մեկն աշխատում է ավելի շատ տի-
բել:

Կանայք յենթակա յեն այդ կրքին:
Խոնարհած ուժի առաջ, միշտ առաջին զո-
հըն են դառնում:

Այդպիսի դեպքում գեղեցկությունը կնոջ
առաջին թշնամին եւ:

Վորքան կուղես թագցրու և այլանդակիր,
գեղեցկությունը յերբեք չի ծածկվում:

Յեզ գրավում, ավելի յե գաղանացնում
տղամարդուն, իր հարազատին անգամ հարվա-
ծելու չափ:

Գեղեցիկ կանանց առաջնացնում, առանում
են:

Կինը վորպես տոարկա, զարդարում ե հարեմը:

Շատերը հարազատների ներկայությամբ
մասնվում են կրքին:

Նրանք աղերսում, արտասվում ու ճչում
են խելագար:

Ու բազմաթիվ այդպիսի խմբեր սարբեր
ճամփաներով քայլում են:

Թռւյլերը մեռնում են, դիմացկունները՝
քայլում:

Վալիները լավ են հասկացել վերին հրամանը:

Զափթեներն ավելի լավ են յուրացըել վա-
լիների խրատները:

Խմբերը նոսրանում են:

Խաների, փաշաների, աղաների հարեմները
զարդարվում են գեղեցիկներով:

Մարդ սպանելը նույնապես սովորելու բան է:

Տարբեր յերկրներում տարբեր ձև ունի:

Արևմուտքն աշխատում է մարդու գոյու-
թյանը վերջ տալ նրա համար աննկատելի կեր-
պով:

Գիտությունը դրանով ել ե զբաղվել:

Գիտական աշխարհը շատերին ե անմահու-

ցըել մարդ սպանելու գործիքների դյուտերի համար:

Արևմուտքում չեն ուզում տեսնել սպանվող մարդու տանջանքները:

Արևելքում հակառակն է:

Ինչքան շատ եւ տանջվում սպանվողը, այնքան մեծ «բավականություն» եւ ստանում ըսպանողը:

Կտրում են ականջները, քիթը, շուրթերը, մարմիխ այլ մասերը, մեջքից, դեմքից հանում են կաշին, շատ անգամ այդ դրությամբ թողնում, անցնում են:

Ավելի «բարեգութները» գնդակով կամ սրով վերջ են տալիս նրա տանջանքներին:

Մի կողմ ողը լցվում եւ տառապանքի աղաղակներով, մյուս կողմ ուրախություն, բավականության ծիծաղն ու քրքիջն եւ փռվում:

Ինքնակալների համար որենքները պայմանական են:

Բազմաթիվ մարդիկ որենքից գուրս, վոչընչանում են:

Իսկ այդ ժամանակ ներքին գործերի նախարարը զեկուցում է նախարարական խորհրդին:

Նրան ընդունում են բուռն վոգեվորությամբ:

Հաստատում են նրա կարգադրությունները:

Ամեն ինչ լավ ե ընթանում:

«Ալմանը հավանություն ե տալիս:

Յեվ լարավոր ու անլար հեռազբերը հաղորդում են, վոր տեղահանվածներն անվտանգ հասել են ապահով վայրեր և իշխանության խընամբն են «վայելում»:

Ամեն ինչ լավ ե:

Աշխարհի հիացած ե իշխանության այդ «կուլտուրական» վերաբերմունքից:

«Չայչիխանաներում» ոքարվանսարաներում, «մեյդաններում», սալոններում, հավաքույթներում, ժողովներում, առանձնասենյակներում, ճանապարհներին մարդիկ ստանում են այդ լուրերը, կարդում, մի ակընթարթ խորանում այս կամ այն կերպ՝ հասկանալու, ապաժոռանում են ու շտապում, շտապում...

Կաֆեները, շանտանները, յերեկույթները, բուլվարները, վաճառատները, կապալները, դրասենյակները, գիտությունը, բանաստեղծությունը և ընդհանրապես գործերը, գործերը, գործե-

թը սպասում են, շտապով, անհամբեր սպասում
են նրանց:

Ասոն ու Ավոն շվիթված են:

Ասոն ու Ավոն տարածում, աշխարհով մեկ
փոռում են մի ամբողջ ժողովրդի վոչընչա-
նալու իրողությունը:

Նրանք փողեվորված են:

Գործում են:

Հասել ե ժամը, յերբ վողջ աշխարհը, յերբ
Յեվրոպան պիտի քարանա այդ ոճիրներից,
յերբ կշարժվի նրանց «գութը» ու իրենց ձայնը
կբարձրացնեն և կոգնեն վերջ տալու այդպիսի
ոճրագործ ազգի:

Հասել ե ժամը իրենց դասը «արդար հա-
մարելու»

Հայկական դասը «շարժվում ե»...

5

Պատերազմի հաջողությունները փոփոխական են:

Չնախառեսած ու նախառեսած պատճառներով գրաված վայրերը յերբեմն դատարկվում են, աեղական բնակչությանը պատահականության մատնելով:

Չորքերը շարժում են հետ ու առաջ Ճնշման տակ կամ «գաղանի» նպատակներով կատարվում են նահանջ:

Նահաջի ժամանակ ժողովրդի առաջնորդները խիստ մտահոգված են լինում:

Ամենից առաջ մտածում են հեռացնել յուրայիներին ու իրենց ինչը, որպեսզի ժողովրդին առաջնորդելիս իրենք «թեթև լինեն»:

Այդ մասին վաղորոք չի հայտնվում,
Վորպեսզի «խուճապ» առաջ չկա:
Թուստկան զորքերը և «կամագորները» նա-
հանջեցին սահմանամերձ շրջանի զրաված վայ-
րերից:

Թյուրբական զորքերը մոտենում եին,
Հայ ժողովրդի դրությունը դժոխային եր:
Մահվան տաղնապը բռնել եր բռլորին:
Նրանց թույլ տվեցին հեռանալ վերջին
բռպեին:

Հարձակվողները հասվեհաս եին:

Թողեցին ամեն ինչ ու զանազան ճամփա-
ներով դուրս յեկան նահանջողներին հասնելու,
Նրանց պաշտպանության առավինելու:

Մարդը սիրում ե ապրել:

Կյանքից մեկ օր իսկ խլելու հումար նա-
պայքարում ե իր ատամներով:

Մահվան վախը մոռացնել ե տարիս ամեն
ինչ:

Թողած տարիների քրտինքով ձեռք բերած
տնտեստկան միջոցները, նրանք նաև մոռացան
ի մի հավաքել հարազատներին:

Մեկը մյուսին կորցրած, մեկը մյուսին մո-

ռացած, ռարսափից դուքս թոջող աչքերով,
փախչում եին:

Ընկնում, բարձրանում, սողում, միտիայնց
տոաջ կտրում, հրուժ, ծեծում, հայրոյում, աղեր-
ուում, արտասփում ու փախչում եին:

Վազում, վազում, վազում...

Շատերը վախից, հոգնածությունից, քաղ-
ցից մնացին ճամփաներին

Շատերը զրկի մանկիկներին դւն զցեցին,
Բաց եին թողնում նրանց թաթիկներն ու
տոաջ տնշնում, վազում...

Թիզճն ամսթոհար կծկվել եր կըծքի տակ,
մի հետին անկյունում ու լուռ, վախենում եր իր-
գոյությունը ցուցահանել:

Կորեկցությունը մոռացվել եր:

Ապրումի վախով բռնված, գոեհկությունն
եր իշխում:

Անձրե եր, ցեխ:

Դեն շպրտված մանուկները կենդանի կեն-
դանի գերեզման եին գտնում հոսուն ցեխի հաստ-
շերտերի մեջ ու արօրվում սայրերի անիփերի,
ձիերի սմբակների տակ:

Ու ճշում եին, ճշում մի վերջին անգամ...

Անեծք եր չորս կողմը...

Անեծք եր ոդի մեջ, անեծք սրտերում...

Այլանդակվել եին դեմքերը, արյունառ-
վել վոտքերը, պատուած հագուստների մեջ ան-
պաշտպան մնացել մարմնի մերկությունը:

Անցան:

Թշնամին ճեռու եւ

Կանգ առան հանգստանալու եւ... ուշաբեր-
վեցին:

Առաջին պահ, ապրելու անզուսով տենչով
բռնված, կտրվել եին շրջապատից, մոռացել
ամեն ինչ ու միայն մի բան, մի հանգամանք եին
դիտակցում. —

Քայլել, քայլել անվերջ, անկանգ...

Ռոպեն թանգ ե, պետք ե վազել...

Իսկ յերբ ուշքի յեկան, սարսափեցին...

Փնտում եին միմիայնց, աղերսում, պա-
դասում ցույց տալ իրենց հարազատներին, կը-
նովը, ամուսնուն, ծնողներին, զավակներին...

Բայց ով դիտեր...

Բոլորը, բոլորը խելազարի պես դես ու դեն
ընկած, վնտում եին...

Նեղում եր սովը: —

Դնդակից ազատված, սուսմոքսի պահանջի
առաջ կանգնել եին անձոր:

Անցան սահմանը:

Հասան:

Լեցուն են գյուղերը, լեցուն՝ քաղաքները,
Պատերի տակ, ավերակներում, բաց լեր-
կնբի տակ, շարունակ թափփող անձրեվի տակ:
Կեղան ե հաստ շերտերով նստել ամեն
կողմ, բոլորի վրա:

Ասոն ու Ավոն գործում են:

Շրջում են, խոսում, բարկանում, հանգըս-
տացնում:

Տեղափորում են,

Իսկ վերջը չկա. գալիս են ու գալիս:
Նախագահուհի Սուսաննան կազմակեր-
պում ե... յերեկույթ, հանդես, հանգանակու-
թյուն:

Ափով շամպայն ե ծախում:

Ֆրակները խմում են, համբուրում ձեռքն
ու նվիրում:

Արդյունքը մեծ ե:

Սուսաննան գոհ ե. նա փայլում ե:

Համաճարակ հիվանդությունները սանձար-
ձակ են դարձել:

Տիֆը սովում ե պատերի տակ, ավերակ-
ների մեջ, կեղտից սնվելով, աննկատելի սա-
հում ե և իր հզոր բազուկների մեջ խեզդում
ձեռքն ընկածներին:

Հետները տեղ հասած, ճանապարհին ծնված,
պատերի տակ, կեղտի մեջ գոյություն տած
մանուկները նվաճ, աղերսում, արտասվում են
ու մեռնում:

Թառամում են ծաղիկները:

**Թերթերը զրում, աղերսում, նզովում, հայ-
հոյում են.**

— «Ոչնչանում ե, փրկություն . . .

**Ստացվում են նպաստներ մոտից, հեռվից,
ծանոթից, տնծանոթից:**

**Վաղորմությունն առաջ է, վշրանքները
շատ:**

Պատպամավորները թոշում են ամեն կողմ:

«Լիազորները» շրջում են:

**Կազմակերպվում են զրասենյակներ, բաց-
վում ճաշարաններ, թեյարաններ զյուղերում,
քաղաքներում, ճամփաներին:**

Պաշտոնյաներն «աշխատում են»:

Նողաստ ե բաշխվում:

Որեք շաբունակ անվերջ ու անվերջ խմբեր
դալիս են, աղերսում, ստում, բարկանում և վո-
ղորմության ձեռք պարզում:

Շրջում ե արկղածն, կիսախարխուր սալլը:
Հոգնած, գանդաղ ու անուշաղիր քայլում
ե կողերը գուրս ընկած համբիտյան քաղցած ձին:
Մի աչքը կույր սալլապանը յերկար մըս-
րակը ձեռքին, վոգեվորված հարվածում ե ձիուն
ու կանչում.—

—Մեռել...մեռել...

Յեվ հավաքում, լցնում ե միմիայնց վրա,
տանում:

Գերեզմանափորերը հոգնել են, դժկամա-
կությամբ են աշխատում:

Փոսերը շատ են յերես:

Իսկ այդ ժամանակ —

—պատերին կպցրած
մեծ-մեծ հայտարարություններն ազգարարում
են Ասյայի համերգի մասին:

Դահլիճը լիքն ե:

Ասյան ավելի գեղեցկացել ե, շարժումներն
ավելի գրավիչ են ու հուզող:

Յերգում ե:

Զայնը յերազկան ե:

Ճահճուտի անդուրը զգվանքն ենրա աչքերում:

Ծափահարում են:

Յեվ յերբ գնում ե, թատրոնի առաջ խանդավառ ցույց են անում:

Դիմաց, գետնին փռված բազմաթիվ մարդիկ նայում են նրանց ու ցավից ճմլվում ե սրտները:

Վառ լույսերի տակ փայլող ինքնաբավական ու կուշտ դեմքերը չեն տեսնում գետնին սողացող արդ հազարավոր բաղցածներին:

Մանուկները վաղում, վոտքերի տակ են ընկնում ու աղերսում. —

— Վողորմություն արեք,

Անկյունում, պատի տակ կռւչ յեկած, իր պապենական սրբնագն ե արտասվալի հնչեցնում կռյօր, անպաճույն ձայներով իր քաղցածությունն ու ու որը պատկերելով:

Գործակատարները յերեկոյան մաքուր հագնված, սղիտակ, խիտ ու բարձր վղնոցներով, գույնզգույն փողկապներով, բարակ ձեռնափայտերը ձեռքերին պատացնելով, շատպում են սի-

նեմա և գործի ընթացքում դրալանները զցած
կանֆետներով հյուրասիրում կանանց ու նրանց
զիրկ թվերը սեղմում:

Զբոսավայրերում ու փողոցների անկյուն-
ներում «կամավորները» իրենց համարձակ շար-
ժումներով և կատարած հերոսությունների պատ-
մություններով զիմնազիստականների ու գայա-
նուշկանների սրտերն են հալեցնում:

Յերգվում են մառզերով:

**Հերոսների վարձատրությունն առատ ե ու
առանց գատողության:**

Հայրենիքը սպասում ե նրանց:

Հայրենիքի գոյության սյուներն են իրենք:

Հաղարավոր մարդիկ պարկածեն խրամատ-
ներում:

Զանձրանում են :
Թշնամին լուս ե :
Յերազում են ցեխի ու կեղտի մեջ :
Տներեւմ սպասում են կանայք, յերեխաներ :
Գարուն ե :
Աշխատանքի ամենայեռուն ժամանակը :
Պետք է վարել ու ցանել արտերը :
Բոստաններ տնկել :
Հիմի դետը պղտարվել ե . ինչքան ձռւկ
կարելի յե բռնել :
Թշնամին շարժվում ե :
Հրամայվում ե սկսել :
Կարգադրություններն անցնում են շարքից
շտրք ու սկսվում ե դնդակների խոսակցու-
թյունը :

Թնգանոթներն աշխատում են յեռանգով։
Գնդացիքներն ու հրացանները սլայթում են
անհընդատ։ կարծես մեկը մի հսկայական գաշ-
նամուրի ստեղունքներին և խփում կանոնավոր։
մի ծայրից մյուսը և հետո։

Յուրաքանչյուր անզգուշորեն բարձրացած
գլուխ, մարմին, թև, մատ, ձեռք խսկույն ըս-
տանուժ և իր բաժին գնդակն ու վերջին հառա-
շանքով հետ ընկնում խրամատի մեջ։

Հետո սկսում եւ արյունի պարը։
Նրամայվում եւ դուրս գալ խրամատներից։
Դիմել նիզակահարձակման։

Վազում են, մի ակնթարթ կանգնում ան-
զիտակ, առա թեվերը ապածած, ճնձվածի
պես արտգ վայր ընկնում մեջքի, կրծքի վրա,
գալարվում, հառաչում։

Համառմ են միմյանց, բանվում, հարվածում։
Նիզակները պառատակների նման վոլորվում
են մարմինների մեջ, դուրս յենում, նորից
մխվում, պատվում։

Նիզակների ծայրերը դուրս են հանում ա-
ղիքների, թոքերի կոտըներ։ Պատուծ փողերից
դուրս եւ ժայթքում արյուն, փորոտիք։

Սրեբը բարձրանում են, իջնում, կտրում
թե, դեմք, գլուխ:

Խառնվել են միմյանց:

Մեկը մյուսին վոչնչացնում, մեկը մյու-
սին տրոյում ե:

Մի կողմը փախչում է, մյուսը՝ հետապն-
դում:

Լուռ ե:

Ամեն ինչ վերջացած ե:

Լուսինը սահում ե յերկնակամարով հան-
դարու:

Փայտում ե:

Ամեն ինչ լավ ե: Վաչինչ չկա. չի յեղել:

Մոռացվում ե ամեն ինչ:

Հոգնած մարդիկ սթափում են իրենց յե-
անդից:

Տիրում ե անգիտակ անտարբերություն:

Պարկում են այս ու այն կողմ ու քնում:

Թիվը շատ ե՝ պահանձել բայց հարթանակն
իրենցն ե:

Գաշտում անշարժ, վարած աբուելի երշտե-
րի նման պարկած են բազմաթիվ մարդիկ:

Հավաքում են նրանց, մռաները յեղած

Վաստաթղթերի հիման վրա ցուցակագրում։
 Փորում են խորը եւ լայն փոսեր։
 Փոսերը լցվում են, ծածկվում։
 Շարվում են խաչեր շարքով, խնամքով։
 Յեղայրական գերեզմաններ։
 Ցուցակները տպագրվում են։
 Լրագրավաճառները վագվագում են փողոցներով, աղաղակում, ազդարարում։
 Ծնողները, կանայք, յեղբայրները, քույրերը շտապով առնում, աչքի են անցնում։
 Աւրախանում են՝ չկա։
 Տիրում, հուսահատ վիետում մազերը՝ ոպավոծ են, վիրավորված իրենց գոյության ոյունը։
 Լրագրերը լցված են «հերոսական կովկանկարագրություններով»։
 «Հայրենիքի փրկության» հերոսների անունները կմնա անջնջելի սերանդների սրտում։
 Թող հողը թեթև լինի ընկածների վրա, իսկ վիրավորներին արագ առողջություն, վորպեսզի իրկին շարքերում լինեն։
 Աւ այդ բոլորի կողքին...
 Հուսնի որոր, նոճիների մեզմ սոսավոյն, հույզ-յերազների քաղցր պատրանք, անզուսով

Կրքի գալարում, զույգ կրծքերի խտիո հպում...
Յեվ հայտաբարություն.—

ԱՄԵՆԻ ԻՆՉ ԹԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ
Հայրենիքի սլաշտողանութեան համար

ԵՂԲ. ԱԼԻԼՈՎ ԵՎ ԸՆԿ.

Կօշկի գործարանը հայտաբարված է
Զինուորական դրութեան մեջ
Աշխատանքներն անընդհատ:
Արտադրութիւնը բարձրացել է $100^{\circ}/_0$ ով
Ընդունում է մեծաքանոկ սլատուէրներ:
Կատարումը ճիշտ և առանց հապտղման:

ՎՃԱՐԸ ԿԱՆԻՒԿ

Հավելեալ $10^{\circ}/_0$ յոգու տուազմաղերիների:

Գյուղում կանգ ե տոել զինվորական վաշ-
տը:

Բաժանված են աների վրա:
Զգում են իրենց շատ հանգիստ. կարծեա-
իրենց տներում լինեն:

Պառագ սլապն ու տատը քաշված տան ան-
կյունում, պարկել են սլատառուտն հին վերմա-
կի տակ:

Տնքանքում ու իրենց որն են անիծում:
Դռանը կանգնած ե զեղեցիկ հարսը ու հա-
ռաչանքով հիշում իր յերիտասարդ ամուսնուն,
վորի հետ ամուսնանալուց հետոյ շատ քիչ ապ-
րեց: Այս առջ ամբով ուսուց սկսած անունը

Տարան «կոխվ»:

Մոտենում ե իրենց տանն ասլրող զինվորը:
Խսքերը շատ պարզ են ու միտքն հասկա-
նոլի:

Խոսում են վարձի մասին:

Զինվորն ավելացնում է:

Համաձայնությունը կայացած է:

Յերկու ամբողջ որ զինվորները հանգատա-
նալուց հետո հեռանում են, անշնչելի հիշատակ
թողնելով:

Մարկոսը յերկար ամիսներ տանից լուր չու-
նի: Ճակատից ճակատ փոխադրվելով, այժմ
իրենց գյուղից շատ մոտիկ ե զանվում:

Խնդրում ե թույլ տալ տուն հանդիպելու:

Վազելով կղնա ու վազելով հետ կղա.
Միայն մի քանի ըստե տեսնի պառավ մորն ու
ջահել կնոջը, մի անգամ գրկի իր փոքրիկին,
վորը հիմի մեծացել, խոսում, քայլում ե:

ԶԵՆ ԹՈւՅԼ ՄԱՂԻՍ:

ՄԱՐԿՈՍՆ ԱՂԱՀՈՎՄ Ե:

ԶԻ ԿԱՐԵԼԻ:

ՄԱՐԿՈՍԸ ԳՆՈՎՄ Ե ԾԱԾՈՒԿԻ: ՓՅՈՒՂԸ ՀՐԵՆ
ՅԵՐԿՈՎՄ Ե: Այնպես շուտ կդնա կդա, վոր վոչ ոք
չի իմանա:

ՎԱՂՈՎՄ Ե:

ՀԵՌՎԻՍ ՆԿԱՏՈՎՄ ԵՆ:

ԿԱՆԳՆԵՋՆՈՎՄ ԵՆ Ու ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՄԱ
ՔԵՐՈՎՄ:

—ԶԵՐԴ ՊԵՐԱՎԱՆԿՈՎՄՅՈՒՆ, ՊԱՍԱՂԻՔ:

ԿԱՐԴԱԴՐՈՎՄՅՈՒՆԸ ՎՈՐՈՉ Ե, ՀՐԱՄԱՆԸ ԿԱՐՃ.—

—ԳԻՂԱԿԱՆԱՐԵԼ:

ՊՐԱՊՈՐՀԻԿ ՍԵՐԺԻ ԱՆՍԻՆՈՎՄ Ե ԿԱՌՔՈՎ:

ԶԻՆՎՈՐ ԹԱՇԹՈՎԸ ԳԼՈՎԽԸ ԿԱԽ, ՔԱՋԼՈՎՄ Ե:

ՄԱՏԱԾՈՎՄ Ե ԻՐ ԱՆՄՉԱԿ ՀՈՂԵՐԻ, ԱՌՎԱԾ
ՄՆԱՋԱԾ ՃՆՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՍԵՐՄԸ ՅԵԼԱԾ Ե,
ՔԻՉ Ե ՄԱՆՈՎՄ ԼԱՇ ԱԲԻՒԻ:

ԱՆՍԻՆՈՎՄ Ե Ու ՀԻ ՆԿԱՏՈՎՄ ԱՊԱՅԻՆ:

ՊԱՄԻՎ ՀԻ ՄԱՂԻՍ:

ՊՐԱՊՈՐՀԻԿ ՍԵՐԺԻ ԿԱՌՔԸ ԿԱՆԳՆՈՎՄ Ե:

ՆԱ ՄՈՄ Ե ԿԱՆԽՈՎՄ ԹՈԹՈՍԻՆ:

ԹԱՎԻՎՈՎՄ Ե ՀԱՅԻՌՅԱՆՔՆԵՐԻ ՄԱՐԹՎԻ:

Թաթոսը կծկվել է. խնդրում ե ներել:
— Վոչ, հայտնիր տասնապետիդ, վոր պա-
տիվ չես տվել:

Թաթոսը չոքել է փոշիների մեջ. համբու-
րում ե վոտքերը:

— Վոչ, կառապան քշիր:

Ու անիծում ե Թաթոսն իրեն, վոր մատ-
ծեց իր հոգի, իր ծնողների մասին:

Պատիժը հայտնի յե:

Կամավոր զինվոր Աշոտը կանգնած ե իր
նշանածի հետ փողոցի անկյունում:

Նշանածը հեռվից յեկել ե իրեն տեսնելու:

Գրել եր, վոր շուտով պատերազմի դաշտ
ե գնալու:

Յեկել ե հրաժեշտ տալու:

Աշոտի վոտքերին յարկարավիդ, փայլուն
գեղեցիկ կոշիկներ են:

Անցնում ե գեներալը:

Աշոտը պատիվ ե տալիս, բայց ճշտորեն չի
կարողանում կիսավառյա տալ:

Գեներալը բարկացած ե. նա կանգնում ե,
մոտ կանչում:

Աշոտը դունատված ե:

Փողոցից անցնողները հետաքրքրությամբ
մոռենում են:

Հայիոյանքներն առատ են: Ազգին ան խըս
Աշոտը խնդրում է կազմակայտթյունը
հարգել:

Գեներալի համբերությունը սպառվում է:
Համարձակվում են իրեն առարկել:

Աչքն ընկնում կոշիկներին:

Հանել:

Հանում եւ:

— Դեն շոգաել փողոցի մեջ:

Կատարվում եւ:

Հօրսնացուն միջամտում եւ:

Գեներալն անդրդվելի յեւ. կարգապահու-
թյուն:

Աշոտը կանգնած է ձիգ:

— Դարձ հետ, քայլերով առաջ:

Աշոտը քայլում է վոտաքոպիկ, պատիժը
կը ելու:

Դիտովները ցըվում են. Աւրախ են, դըժ-
գոհ, ծիծաղում, քրթմնջում:

Մատվեյ Կարպիչ Կրեստովի (Խաչիկյան)՝
գործարանն աշխատում է հայրենիքի պաշտ-
պանության համար:

Այս առաջիներում նրա դործերը «աջա» են:
Գործարանում ավելացել եւ յերեք բաժանումունք:

Տարեկան մեկը:

Քաղաքի կենարոնում՝ յերկու ձեռք տուն ունի:

Կահավորթյունը բոլորովին փոխվել եւ
կինը սալոնական կյանք եւ ստեղծել:
Խնքը պատվավոր անդամ եւ մի քանի գըն-
կերությունների ։

Տղանեցն ու աղջիկներն ապրում են ամեն
մեկն իր առանձին կյանքով:

Կաֆեների ու շանտաների կյանքը շատ ե
թանգ, բայց դործարանն աշխատում է:

Պատերազմի շնորհիվ:

Յեթե մի քանի տարի ել այսպես շարու-
նակվի, կը ստովի դործերը բոլորովի, լավ
կը լինեն:

Լոնդոնի բանկում ունեցածը դեռ մեծ չե:

Պետք եւ շնորհակալություն հայտնել:

Մի թքիր այն աղբյուրի մեջ, վորից ջուր
ես խմում:

Ու պատրաստում եւ մախորկա, թուղթ,
մատիտ, ասեղ, թել:

Աղջիկներն ավելացնում են միրգ, կանֆետ
(Գյողալովի): Տղաները՝ հին լրագրեր (ազգային):
Կը եսոսովը „նվերների“ հետ մեկնում ե
ռազմաճակատ:

Լրագրերը թմբկահարում են:
Իսկական աղգասեր:
«Հնկերությունների» վարչություններն ի-
շենց ժողովներում շնորհակալության վորոշում
են հանում:

Նահանգապետը միջնորդում և շքանը-
շան տալու:

Պատերազմը յերկարում է:
Ավերված գյուղերի ու ամայացած դաշտե-
րի թիվն ավելանում, տարածությունը մեծա-
նում է:

Գյուղերում աշխատանքները կանգ են ա-
ռել:

Շուկաները դատարկ են:
Հաց չկա:
Գները շատ են բարձրացել:
Մթերքները թաղցրած են, ծախուժ են
ծանոթներին «խաթրի համար»:
Քաղաքը հուղված է:

«Ստորին դասը» քաղցած ե, հաց ե պահանջում:

Աղմուկը մեծանում ե:

Գժղոհությունը տարածվում ե ալիքավոր:

Ռազմաճակատի զրությունը փոխվել ե:

Նահանջում են:

Ռազմամթերքն ուշանում ե: Ստացվածը չի համապատասխանում:

Պահեստները մնում են առանց դատարկելու և անցնում թշնամու ձեռքը:

Պաշարի առաքումն անկանոն ե: Ճանապարհները քայլայված են, հաղորդակցության միջոցները քիչ:

Որերով հաց չի համում: Ճանապարհները կտրված են: Պաշարն ընկնում է թշնամու ձեռքը:

Դավաճանություն:

Հասկանում են, տեսնում, բայց ինչպես ասել:

Հրամանը կարճ ե, վճիռը որոշ. —

— Գնդակահարել:

Հուզված են:

Նահանջներն անկանոն: Թշնամու շարժումները չեն ստուգվում:

Զոհերն ավելանում են ու ավելանում:

Հուզմունքը տարածվում է:

Ծովը փրփրում է հատակից:

Նախարարները շփոթվել են, գլուխները
կորցրել: Միջոցներ են ձեռք առնում:

Դենարալները կատաղել են: Հրամանները
շտապ, ճերթից դուրս ու շատ կարեոր են:

Նշանափորները մեկնում են ուղմանակատ,
իբենց ներկայությամբ վագեվորելու դինվոր-
ներին, բարձրացնելու ընկած վաղին:

Հեռեառները ճառում են առևն տեղ:

Հայրենիքը վաճանագիտ է, հայրենիքի սի-
րուն պիտի կրել նեղություններ, կանդ չառնել
զաների առաջ:

Հաղթանակ, հաղթանակ...

Դեպի ճակատ, ամեն ինչ պատերազմի հա-
մար:

Հուզմունքը մեծանում է:

Ամեն կողմից հավաքվում, միանում, ձուլ-
վում, մեծանում է ու դարվում, գլորվում
ամեն ուր:

Փրփուոր յեսում, ալիքների ե փոխվում:

Ալիքները ծառանում են,

Ալիքները ուռշում, յերես են գուրս գտվու,
ազաղակում, լեռնանում ու իրենց զիրկն առ-
նում ահոելի նավը՝ նավը արյունի, տառապան-
քի ու ճնշման՝ շրջափակում, սեղմում ու խեղ-
դում իրենց զրկի խորիս ողտիում:

Ու հաղթանակի հզորությամբ յելնում են
ափերից, փափում ամեն կողմ, պյուղեր, քաղաք-
ներ և իմի հավաքում, զժոհությունները, սա-
ռապանքի արցանքները, ճնշման հոգնությունը:
Թագմաճակարը շանչը զսղած, սպասում է:
Թագմաճակարը ներքին հոգմունք և ապ-
րում:

Զգում են ալիքների շառաչը, դիտեն, վոր
նավն արդեն խորառելված է:

Զգում են ու սպասում:

Յեվ հանկարծ, ուժգին թափով, դինամիտի
պես հոկա գորգունով ճայթում ե լուրը.—

—Հեղափոխություն:

Հայոց ազգական առաջնորդության հայության
հայության վեհանք առ անոնց զնուոր
համայնքաւուն առ անոնց առ անոնց զնուոր
հայության ազգական առ անոնց առ անոնց զնուոր
հայության ազգական առ անոնց առ անոնց զնուոր

7.

Քաղաքավուխ Ստեփան Գրիգորիչն այդ
գիշեր բավական ուշ ժամանակ, խաղակիցների
հետ կանաչ սեղանի շուրջ բոլորած, յեռանդով
«պրոֆերանս» եր խաղում, յերբ նրան անհան-
գըստացրեց գործերի վարիչն ու Թիֆլիզից նոր
ստացված «խիստ գաղտնի» և «ամենաշտագը-
մի հեռագիր հանձնեց:

Ստեփան Գրիգորիչը հեռագիրը կրեց սե-
ղանին, շարունակեց խաղը և յերբ «պարական»
վերջացավ, վերցրեց այն և այս ու այն կողմ
շուռ ու մուռ տալուց հետո, բաց արեց,

Խաղակիցները նկատեցին, ինչպես մի ա-
կընթարթ գունատվեց նրա դեմքը, բայց խոկոյն
զսպեց իրեն ու վոտքի յելտվ:

Բոլոր հարցումներին անորոշ պատասխան
տալով, ներողություն խնդրեց ու դուրս յելտվի-
կառքը նրան անմիջապես հասցրեց նահան-

գապետի տուն:

Ուշ լինելն արգելք չեղավ ներս ընկուն-
վելու:

Նման հեռագիր ստացել եր և նահանգա-
պետը:

Հեռագրի բովունդակությունը յերկու «հայ-
րերի» համար ցնցող եր,

Ի՞նչ անել:

Վորոշվեց «տուայժմ» դադտնի պահել և
սպասել նոր կարգադրության:

Ակումբում մարդիկ մի պահ զանազան յեն-
թաղրություններ արեցին, ապա շուտով մոռա-
ցան ու խորասուզվեցին խաղի մեջ,

Իսկ լուրն արդեն չըջում եր տնից տուն,
ամեն տեղ տարբեր տողավորություն թողնելով:

Հետեյալ յերկու սպասողական որերում
«հայրերի» համար դրությունն ավելի բարդա-
ցավ:

**Ստացված հեռությի բովանդակությունը
հաստատվեց:**

Թագավորը հրաժարվել է.

Նրա հաջորդը նոյնակա հրաժարվել է հո-
գուտ «ժողովրդական» կառավարության:

Հայտարարվեց պաշտոնապես:
 Ժողովրդական մեծ ցույց գումարվեց:
 Բոլորն ուրախ են:
 Աւրախ են և նախկին «կառավարողները»,
 Նահանգապետը ճառեց:
 Նրան ընդունեցին խանդավառությամբ:
 Քաղաքապահները, ժանդարմները, ստրաժ-
 նիկները սարսափած են:
 Նրանք զինաթափած են:
 Գործերից հեռացված:
 Բայց կարեորները «թռել» են:
 Կանոնավոր կարգով հանձնել ու հեռա-
 ցել են:
 Վորովինետն «հեղափոխությունը» պիտի
 տանել «կարգ ու կանոնով», կարգադրություն-
 ներով:
 Զպետք եւ թողնել, վորմակընթացությունն
 ավելանա:
 Այլուպես կվողողի տփերը:
 Արժատահան կանե գարավոր կազնիները:
 Գործարանատեր Ալիլովը հառկանում ե, վոր
 այս անդամ գործը այնքան ել հեշտ չի վեր-
 ջանա:

1905 թիվը չե:

Սակայն չի կասկածում, վոր այդ ամենը
ժամանակավոր է:

Թաղավորը պարտավոր եր հեռանալ:

Վոչ մի «գեմոկրատ» չի կարող հանդուր-
ժել մեկ մարդու գերիշխանությունը:

Յերկիրը պիտի կառավարի «ժողովուրդը»
իր ներկայացուցիչների ձեռքով:

Բոլորը պիտի «ընտրվեն»:

Հարկավոր է պարլամենտ:

«Հիմնադիր ժողովը» կարող է վերջնական
ձև վորոշել:

Իսկ մինչ այդ, «ժամանակավոր կառավա-
րությունը», վորպես ժողովրդի իսկական կամքն
արտահայտողի, պիտի կանգնի իշխանության
գլուխ:

Կեցցե ժամանակավոր կառավարությունը:

Կեցցե հայրենիքն ու հաղթանակը:

Շարունակել պատերազմը մինչեւ վերջին
հաղթանակ:

Հայրենիքը ձեռքից գնում ե, կոխվ մինչեւ
վերջին սարդը:

Կերենսակին:

Միայն նա, միայն նա յե ժողովրդի խսկա-
կան «բարեկամը»:

Իշխանությունը նրան:

Ալիքը զլորվում ե, մեծանում:

Հասնում ե գյուղերը:

Գյուղը չի հավատում, սարսափում ե, յո-
րեան ե խաչակնըում:

— Բա դե առանց թագավորի ինչպես կա-
րող ե ապրել ժողովուրդը:

— Դժողքը շարժվել ե:

— Նեռն աշխարհ յեկել:

Ամեն կողմ ու ամեն տեղ հոլովում են
Բասպուտինի անունը:

Ստեղծվում են հարյուրավոր լեզենդաներ:
Կանայք անիծում են թագուհուն:

— Բոլոր պատճառը նրա անկուշտ սիրա-
բանությունն ե:

— Տղան ել հո խսկական թագավորից չե-
վարժապետը բացատրում ե, հասկացնում:

— Հիմի իշխանությունը ձերն ե. Յերկի-
րը կառավարելու եք դուք. Ընտրությունները
լինենելու յեն քառանդամ:

Բժիշկներ, ինժիներներ ու փաստաբաններ
անցել են կառավարության զյութու:

**Նահանգապետը շարունակում է ապրել
հանգիստ:**

**Փորձված մարդ է, յերբեմն խորհուրդներ
է տալիս:**

**Բանտերից արձակվեցին, աքսորավայրե-
րից վերադարձան քաղաքական հանցավոր հա-
մարվածները:**

**Շատերը յերիտասարդ գնացին, վերադար-
ձան ժարացած:**

**Քաղաքը վոգեվորված է: Նրանց ընդունում
են խանդավառությամբ, նրանք որվա հերսոնե-
րն են:**

**Բանտերից դուրս յեկան, ընդհանուր դր-
ությունից ոգտվելով, նաև քրեական հանցա-
վորները:**

**Քաղաքական աքսորյալների ոգտին կազմա-
կերպվում է հանդանակություն, յերեկույթ,
հերկայացում:**

**Հասարակական զործիչ տիկիններն ու որի-
որդները կը կին վոտքի վրա են: Վազվզում են,
կազմակերպում, խոսում, վոգեվորվում, հիա-
նում, տիրում, ուշաթափում:**

Հիմնարկներում «մեծավորները» ներս մըտ-

Նելիս սիրալիք բարեւմ, ձեռք են տալիս բուլորին:

Լոռւմ են քաղաքավարի ուշադրությամբ:

Այլիս չեն ասում. —

— Ժամանակ չունեմ, —

— Այլ . —

— Իսկույն, խնդրեմ նեղություն կրեք
քիչ սպասելու:

Պատարագի ժամանակ քահանաները «պահ-
յա զկայսըն մեր»-ը փոխել են «զժամանակա-
վոր կառավարությունն»-ով:

Զինվորները խրամատներում նստած, ըս-
պասում են:

Առաջին հրամանն ստացել են. —

Ճանաչվել են վորպես մարդ:

Վագոնների վրայից ջնջված ե «8 ձի կամ
40 հասարակ զինվոր»-ը:

Թույլ ե տված ժողովվել, կարծիք հայտնել:

Մահվան պատիժը վերացած է:

Հեղափոխության հսկա ալիքը ահեղ մոլն-
չյունով անցել ե խրամատների վրայով և հեռա-
վոր ու մոտիկ վայրերից հավաքված հազարա-
վոր մարդիկ, ծածկված կեղտով, միջատներով,

հառաջոնքով հիշում են իրենց գաղտ ու արոտը,
առնն ու ընտանիքը և սպասում:

Բժիշկներն, իրավաբաններն ու ինժիներ-
ները, վոր ազատություն և մարդկային իրա-
վունքներ շնորհեցին նրանց, շնորհակալության
փոխարեն պահանջում են շարունակել պատե-
րազմը, գիտակցել, վոր թշնամու վոչնչացումն
անհրաժեշտ է:

Հայրենիքը սպասում է:

Դաշնակիցները սպասում են:

Դաշնակիցները պահանջում են:

Ասոն ու Ավոն մտահոգված են:

Ասոն ու Ավոն յերջանիկ են:

Ամեն ինչ իրենց սպասածից ավելի լավ ե
դասավորվում:

Յերկնքից որհնված ե իրենց ծրագիրը:

Վիլայեթների մեծ մասը գլաված է, մնում
է յերկու ծովերը միացնել:

Ու շատապում են ըանակի մոտ բժիշկներ,
փաստաբաններ, ինժիներներ, Ասոն, Ավոն:

Զինվորները լսում են հիասթափված:

Լսում են, գլուխները թափահարում ե
սպասում:

իրենց լնկերներն ուրիշ բան են ասում։
Նրանց ասածն ավելի հասկանալի եւ
Ավելի ճիշտ եւ ու նպաստավոր։
Կենարոնում դրությունն այլ եւ
Բանվորները կազմակերպում են զինվորներին, միանում նրանց հետ։

Ի՞նչ գործ ունեն ոտար դաշտերում։
Ինչու պիտի կոտորեն իրենց նման անից,
հողից, գործարանից զրկված քաղցած մարդկանց։
Միմյանց հետ պատերազմ չունեն։
Զեռք են պարզում մեկը մյուսին։
Դեպի տուն։
Միահամուռ ուժերով՝ իշխանությունն իրենց։

Պատերազմող հակառակ կողմը համաձայն
կարգադրությունների, բոլոր ճակատներում
հարձակվում ե, քշում։

Հրամայվում ե հակահարձակվել, դեմ դնել։
Զինվորները համաձայն չեն։
Զինվորները դժգոհ են։
Տուն, դեպի հեղափոխության դիրքերը։
Յեվլիմբերով ու առանձին առանձին, կարգ ու
կանոնով և անկարդ, դենքով ու անզենք, շտա-

սլում են տաւն, գնում են իրենց հարազատների
կյանքն ազտելու սովոր, բռնությունից, հո-
ղատերերից:

Կենտրոնում կոշտացած ձեռքերն ու մրոտ
քրտինքի կաթիրներով ծածկված ճակատները
ապստամբվում են:

Բժիշկները, փաստաբանները, ինժիներները
գլուխները կորցրել են:

Նրանք փախչում են:

Նրանք դժոն են:

Զորքը միանում ե:

Բացվում ե Հոկտեմբերը:

Պատերազմի դադարելու լուրը թոշում ե
ամեն ուր, և.—

Հողը՝ գյուղացուն, գործարանը՝ բանվորին:

Մանր ազգերն ինքնորոշվում են:

Քնացքներն հազարավոր զինվորներով լե-
ցուն, հեռանում են ռազմաճակատից:

Յեկել են Ռւրալից, Դոնից, կազանից ու
Սիբիրից:

Այժմ վերադառնում են:

Ազգերն ինքնորոշվում են:

Հայերը, Վրացիք, Աղբբեջանցիք:

Նրանք չեն ճանաչում Հոկտեմբերը:
 Նրանք շարունակելու են պատերազմը:
 Ճակատը դատարկվում է:
 Թշնամին առաջ ե շարժվում:
 Խուսական զորքերը գնում են:
 Մանր աղջերի զորքերը՝ մնում:
 Աւքից ճակատներից ել գալիս են խորերով:
 Այդպես ե կարգադրված:
 Հեռացող զորքը զինված ե:
 Զենքերը տանում են իրենց հետ:
 Իսկ մանր աղջերին պետք ե զենք, շտո ե
 պետք:
Զինաթափել:
 Գնացքները կայարանում կանգնած են վա-
 ղուց,
 Հեռացողներն հուզված են. պահանջում են:
 Կայարանապետը հրաժարվում է:
 Այդպես ե կարգադրված:
 Բայց հեղափոխությունը տարերք ե, վոր
 մըրըիկի պես խորտակում ե ճանապարհի ար-
 դեկըները,
 Հեղափոխությունը կաղապար չունի:
 Նա խորտակում ե այն ամենը, վոր իրենից
 չե բղինել:

**Շոքեմեքենաները հանվում ու գնացքին են
կտպվում:**

**Մեքենավարները աշխատում են ստիլ-
մամբ:**

Գնացքը շարժվում է:

**Մեկնողներն ուրախ են, յերգում են, նը-
վադում, սրախոսում, ոլարում, հայհոյում:**

**Գնացքի անիվները պտտվում են արագ ու
յերգում.— «Գնում ենք, գնում ենք, համում
ենք, հապնում ենք, հա հասանք....»**

Հասան նոր կայարան:

Մութ ե:

**Ո՞վ կարող ե ասել, թե վո՞ր քարի կամ
թփի տակ ե թագնված դավադրությունը:**

Կանգ առան:

Գնում են առւն: Ում ինչ: Ուրախ են:

—Զինաթափվել...

Ո՞վ ե պահանջում:

Ժողովուրդը զենք ե ուզում:

Շրջապատված են ամեն կողմից:

**Անծանոթ վայրեր են, մութ ե, ով դիտե
քանի՞մ են:**

Աւ սկսվում ե ընդհարումը:

Մի կողմը բաց կայարանում, գնացքի մեջ,
մյուսը՝ քարեր։ ու թփերի տակ թագնված։

Ճանապարհը կտրված ե, յերկաթագծերը՝
հանված։

Յեզ հազարավոր, տանից ու տեղից
կտրված մարդիկ, իրենց հարազատների վոխա-
րեն զրկում են անծանոթ վայրերի քարքարուտ
հողը, անգիտակ իրենց վախճանի եռթյան։

Իսկ պնացքները, սեկը մյուսից հեռու, ան-
տեղյակ առջեկի կատարվածին, գալիս են ու գա-
լիս և վազոններում լեցված հազարավոր մար-
դիկ հավիտենական կայան են գտնում յեր-
կաթուղային այդ փոքրիկ կայարանի ձորերում։

Ու ձմեռային բուքը կարծես խղճալով, ձյան
հաստ շերտերով ծածկում ե այդ անթաղ գիակ-
ները։

Կենտրոնի կարգագրություններն իդուր են:
Կենտրոնին չեն ճանաչում։

Ազգերն ինքնորոշված են։

Այժմ գլուխ են կանգնել «զագե»-ները,
«ո»-երը, «ելի»-ները։

Ազգային զորքերը դիմվում են:

Ազգային զորքերը շարունակում են պատերազմը,

Զորքի թիվը քիչ ե:

Հարկավոր ե հարյուր, յերկու հարյուր, երես հարյուր հազար, միլիոն:

Զինակոչ ե:

Հայերի գրությունն ամենից վտանգավորն ե:

Հայաստանի դիրքն աննպաստ ե:

Արտաքին թշնամիների կողքին կանգնած են նաև ներքին թշնամիները:

Բայց զործի զլուխ կանգնում են Ասոն ու Ավան:

Հաղթանակը մերն ե,

Մառզերների թիվը անհաշիվ ե,

Վաղեվորությունը՝ մեծ:

Կենորոնի կնքած հաշտության պայմանագիրը ձեռնորւ չե:

Կոխվը շարունակվում ե:

«Ազգային զորքերը» մեկը մյուսի հետերց թողնում են գրաված վայրերը,

Դատարկում են իրենց յերկրամասերի կալեր տեղերը.

Թշնամին դալիս ե:

Հանգիստ, անկսուով դալիս ե փախչող «ազգային զորքի» հետեւից հասվեհաս:

Ու յերեք տղզերի միացյալ կառավարությունը հանցանքը միմյանց վրա բարդելով, մեկը մյուսից ծածուկ, բանակցում ե հաղթողի հւա:

Ե՞լք:

Բաժանվել Ռուսաստանից:

Բաժանվել ու անկախ հաշտություն կնքել:

Այդպես և հաղթողի կամքը:

Բաժանյա, զի տիրեսցես:

Ու ճյուղը պոկվում ե բնից և ուժեղ քամու բերանն ընկած, նետվում այս ու այն կողմ, հետզհետեւ քամվում ե հյութը ու տերենները մեկիկ մեկիկ պոկվում, արորվում, փոշիանում են:

Յերեք փոքրիկ ժողովուրդ, ուրիշի ոգնությունից զուրկ՝ նեղ ողակում սահմանափակված, իշխանություն են կտզմել և մեկը մյուսին դավագիր, մեկը մյուսին անվատան, աչքերն ողղել են Արևմուտք, Արևելք:

Բննիված մեծության տենչով, նայում են ոտարի ձեռքին:

**Միմյանց մոռացած, ոտարի դռանն են հե-
նարան փնտում:**

Սեյմը գործում ե:

**Սեյմից դուքս գործում են բժիշկներ, փո-
տաբաններ, խժիներներ, վարժապետներ:**

Գործում են Ասոն ու Ավոն:

Գործում են «իձեն» ու «ելին»:

Գործում են «ողլին» ու «զաղեն»:

Յերեք աղջերը բաժանվում են:

Յերեք աղջերը զատ-զատ տնկախտնում են:

Ադրբեջանի հանրապետություն:

Վրացական հանրապետություն:

Հայաստանի հանրապետության:

**Բաժանվում են, վիճում, սպառնում, զին-
վում, պատրաստվում:**

**Անկախության հայտարարման փառահեղ
տոնակատարություն:**

Բերկրանք, ցնծություն:

Ասոն ու Ավոն հրճվանքի մեջ են:

Հայտատանն սնկախ ե:

ՄԵծ Հայտատան:

Ծովից ծով Հայտատան:

8.

Անկախ Հայաստան:
 Իրականացած դարերի յերազ:
 Կառավարություն: Նախարարական խոր-
 հուրդ, Պարլամենտ:
 Սեփական դրամ:
 Զորք, սպառապետ:
 Սահմանադան գնդեր:
 Բայց մեր յերկիրը մի փակուղի յեւ բացի
 յետ-յետ գնալուց, վոչ մի տեղից դուրս դալու
 ճնարավորություն չկար:
 Ընկար, սպասիր պալիքին, յԵթե չես ու-
 գում վերադառնալ և ճամփադ շարունակել
 հանգիստ:
 Իսկ յեթե ջղային ես ու հանգիստ նստել
 չես կարողանում, սիսի կոտրես դլուխո, լավա-
 գույն դեպքում մոռքդ:

Իսկ թե հանգիստ մտածես ու պայմանները կշռադատես, պատից վեր մազլցելու յելք կը գտնես:

Պատը խորտակել չես կարող:

Հնարավոր չե, յերբ թերդ անուժ են և նույն իսկ մատներիդ եղանգները փշրված:

Անկախ Հայաստան՝ մի մեծ փակուղի:

Դաշտերն անմշակ են, տղամարդիկ զինակոչված՝ սահմանները պաշտպանելու:

Փակ ե բոլոր ճանապարհները:

Դրսից մթերք չի ստացվում:

Գյուղը թշնամացել ե քաղաքին:

Քաղաքն արհամարհում ե գյուղին:

Սովը փռել ե թերը,

Հագուստը չի ծածկում մերկությունը:

Գաղթականությունն որ ավուր ավելանում է, լցնում բոլոր պատերի տակ, կեղտոտում, սովից ու անոգնականությունից մեռնում տունց հաշվի:

Հիվանդությունները տարածվում են ամեն ուր և հնձում անխնա:

Իսկ սահմանին մոտիկ կանգնած ե թշնամին:

Հայնացել ե նրա տիրապետական ախորժական:

Ազտվում ե սաեղծված ժամանակավար ուսուցած գրությունից:

Առաջ ե շարժվում:

Մեր թիկունքում նրան սպասում ե «զարդեական» «անկախ հանրապետությունը»:

Ճանապարհին ավերում ե գյուղեր ու շենքեր: Վրեժ ե լուծում:

Իմազերիալիստական ու կրոնական վայրենացած անձնական վրեժ՝ կոտորելով մի ամբողջ ժողովուրդ:

Գնում ու վաճառում են:

Հիտուն ռուբլով կարելի յե սպանելու «բավականություն» ստանալ:

— «Թյուրքերը դալիս են» . . . այս ե կանգնած սղի մեջ:

— «Թյուրքերը զալիս են» . . . այս ե պրաբում ամեն կողմ . . .

Պատվառմ ե փողոցներում, գյուղերում, դաշտերում, մտնում տնից տուն, թաղվում ու զեղների մեջ ու անյելանելիության շիկացած յերկաթի վոզչ ճանրությամբ նոսում բոլորի վրա ու խանձում:

Ճենճահոտը յերկինք ե բարձրանում։
Վատանգի ահուելիությունը բթացրել ե գի-
տակցությունը։

Մարդիկ սոսկում են, բայց վաչ լաց կա,
վոչ հասաչանք։

Սոսկումից ծիծագում են, քրքջում։
Ամեն ժամ լուրեր են հասնում այս ու-
այն շրջանի բնակչության կոտորածների մա-
սին։

Ամեն ըսպե բազմաթիվ մարդիկ փախչում
են, փախչում։

Դիտակցությունը հարել է։

Մնացել ե մի միտք . . .

Փախչել . . .

Ամեն ինչ, հնարավորի սահմաններում,
կաղել, պատրաստել ու սպասում են։

Ամեն փոքրիկ աղմուկից, ամեն անորոշ
խլրտումից հանկարծակիի յեկած, իսկոյն զեսլի
այդ կապոցներն են վազում։

Սակայն փախչելու ըոպելին մոռացվում
են նայե այդ կապոցները։

Մոռացվում ե նույնիսկ հացի կապոցը։

Մի քանի հազուստ միմյանց վրա հազած,

շաբաթներ շարունակ մարդիկ յերբեք չեն հանվում. քնելու փոխարեն սենյակների անկյուններում, մթության մեջ, կուչ յեկած ննջում են ու թեթև թխկոցից սոսկումնահար, վեր ցատկում խելագար ու մոռացած ամեն ինչ և բոլորին, դեպի դուռը վազում:

Դավառները ավերված են.

Լայնաստարած յերկրից մի ծվեն և մնացել, ուր բոլոր փախչողները կենտրոնացած, վերջին որերն են ապրում:

Բայց ալիքն այդ գերեզմանատան դուռն ել և բաղխում:

Բեկեր ու խաներ, նենգության թույնով պատվաստված բազմաթիվ զորքերի գլուխ անցած, կտրել են այդ գերեզմանատան դուռը:

Պայքարը վերջինն եւ.

Յեվ սոսկումով բռնված մարդիկ, վախից կծկված, յերբ արդեն վագրի ատամներն զգացին իրենց կաշվի վրա, անգիտակցական ուժով տարված, յելան միասին մեռնելու:

Յելան յերգով, քրքիջով.

Վախոր հերոսներ ծնեց:

Այլես վոչ մի տեղ փախչելու անհնարինու-

Թյունը ստիպեց նրանց մեռնելու պահին ավելի
ամուր կառչել կայնքին:

Վերադաձ չկար:

Կատարվեց հրաշքը:

Սոսկումը փրկեց:

Արտաքին դեպքերի ընթացքը յեկավ ոժան-
դակելու:

Ողակը թուլացավ:

Բայց հաջողությունը անսանձ է դարձնում
ցանկությունը:

Անցյալը մոռացվում է:

Չի կշռադատում գալիքը:

Ասոն ու Ավոն կորցրել են չտփը:

Կրկին ճամփան գնում է հին կարգով:

Այս մերն եւ Այն մերն եւ:

Այս մեզ պիտի տալ: Այն մենք չենք զիջի:

Կխլենք զենքով: Կտիրենք զոռով:

Յերեք փռքրիկ ժողովուրդ, ճնշումից յե-
տած ու բախտակից, ձեռք չտվեցին միմյանց
ու աշխատեցին մեկը-մյուսին իշխել:

Յեվ միմյանց վոչնչացնելու, զարգանալու
արգելք հանդիսանալու մեջ եին իրենց գալիք
յավ որերի իրականացման յելակետը դանում,
ավելի հզորների դռները մաշելով:

«Դիսլոմատյան», «Նոտաները» և պրագրությունների կույտերը փոխվում են դեռք ուղահի:

Թոշում են «պատգամավորները», «լիազորներն» ու «ներկայացուցիչները» Յեմրոպա: Գծվում ե քարտեզը:

Ամեն փոքրիկ տեղի մեջ փրկության նշանակություն դնելով, ատամներ են ցցվում:

Ասոն ու Ավոն կառավարություն են կազմել:

Ասոն ու Ավոն իրենց ժողովուրդին են գոհել, նրան կառավարելու համար:

Ոթոները միշտ պատրաստ են նրանց գոհերին:

Հանձնարարությունների մեծ ու փոքր պաշտոնյանները սպասին կանգնած:

Կաբինետներ ու գեղարդմենտներ, գրամատուն ու պահեստներ նրանց խսորով շարժըվող:

Ազգային ջիղն ուոչում է:

Ազգային ջիղը՝ լարվում:

Հասել ե «Մայր Արաքսին» սպավօրի շորերը հարսանեկանով փոխարինելու ժամանակը:

Յերբ նրա տփերին միայն «իր դավակունք» լինեն:

Տիրական ձգտումը փոփում է հսկայական ցանցի պես ու մզգավանջային ծանրությամբ նստում ժողովրդի զլիախն:

Լիազորներն ու պաշտօնյաները հաստանում են որամագծով:

Իսկ հաց չկա:

Մթերքները պակասում են ժամ և ժամ:

Արեք շարունակ «սոչեր» են կանգնել փոների ու կենսամթերքների խանութների առաջ:

Տոմսերով ստանում են բառորդ ֆունտ թեփահաց, լոբի:

Բայց «հատուկ կարգադրությամբ», «պետական» պետաքերի համար յետեի դռնից տանում են վիթերով սպիտակ հաց և այլ մթերքներ,

Փողոցները լեցուն են վոդորմություն աղաղակող մանուկներով, ծերերով, կանանցով:

Ճաշարանների, թեյարանների դռների տուջ խիտ կանգնած, սովից դուրս թռչող աչքերով, դիտում են ախորժակով ճաշողներին, ընթրողներին ու նվազուն ձայնով աղերսում:

Վողորմություն տվող չկա:
Փշանքներն անգամ ազահորեն բերան են
զցվում:

Մարդիկ չեն կշանում,
Ուտում են, շարունակ ուտում ու չեն կըշ-
տանում:

Միշտ քիչ ե թվում:
Գրպաններում, ծոցերում, թղթապանտեկ-
ներում հաց ե պահվում բոլորից գաղտնի:
Միշտ նախանձով են նայում վորեե բան
ծամողի բերնին:

Ֆիղիքական գոյությունն անապահով է:
Մութն ընկնելուն պես փողոցները դա-
տարկվում են:

Ամեն անկյունից «քաջաբար» հարձակում-
ներ են լինում:

«Հերոսները» բազմաթիվ են ու անվախ:
Կառավարությունն անուժ է նրանց գեմ:
Կարգի չեն յենթարկվում:

Զորանոցները դատարկվում են:

Զինվորները փախչում են:

Ռազմամթերք չկա:

Ցեղածը՝ անհամապատասխան:

Իսկ ողակը կը կին սկսում ե սեղմվել:
Թյուրքիայում, մեզ սահմանամերձ Արջա-
նում կենարոնացել են իրենց յերկրի դրությու-
նից դժգոհներն իրենց զորքերով, նոր կյանք
ստեղծելու նպատակով:

Մերձեցման ձեռք են մեկնում:

Առաջարկվում են պայմաններ:

Ասոն ու Ավոն մերժում են:

Մերն ե, կովով կը վերցնենք:

Կառնենք ձերն ել:

Մեզ պաշտպանում ե Անգլիան, Ամերիկան:

Ամերիկան վերցնում ե մեր մանդատը:

Ամերիկան ուղարկում ե կենսամթերք ու
ալյուր:

Անգլիան մատակարարում ե ուղմամթերք
ու հագուստ:

Թրանսիան ուղարկում ե փամփուշտ:

Ճառեր, բանկետներ:

Չեռքերի սեղմում, համբույր, շնորհավո-
րանք:

Ակումբում մեծ ցույց, հանպատրաստից:

Հառաջ, հառաջ:

Գեներալները ղեկավարում են:

Խմբապետները հրամալում։
 Փողոցներում՝ վոդեվորություն, շքերթ։
 Զորտհանդես է։
 Նախարարապետը հանդեսն ընդունում է
 ցիլինդրը կես բարձրացրած։
 Սինեմայում այդպես են ցույց տալիս։
 Քաղցածները հոծ խմբով շրջապատել են նը-
 րանց, խամբող աչքերով նայում ու հուսահատ,
 դուխները թափահարում։
 Զինվորներն անտրամադիր են։
 Հոգնած են ու հյուծված։
 Փողովուրդը, զորքը . . .
 Ղեկավարները վուզեվորված են,
 կուշտ են։
 Նոր ասպարեզ ե բացվում,
 Փառքի նոր դափնի . . .
 Սկսվում է։
 Նահանջում են։
 Աղակն արդեն խեղզում է։
 Փողովորդն սթափվում է։
 Զորքն ուշաբերվում։
 Հասկանում են։
 Դեպի տուն։

Թշնամին մոտենում ե:

Թաղաքը վտանգի մեջ ե:

Մտքերի խուլ դժգոհությունը մեծանում
է ու արտահայտվում:

Բարձրացնում ե իր ձայնը:

Ասոն ու Ավոն հասկանում են:

Մեկ անգամ խեղդել են այդ ձայնը բայց —

Այլևս անհնարին ե:

Ավիքը մեծանում ե:

Պահել դիրքերը:

«Ծովից ծովը» յերակ ե: Իդյալիստների
ցանկություն: Նրանց հետ Ասոն ու Ավոն յեր-
քեք համաձայն չեն յեղել:

Այժմ հնարավոր չե:

Այդ մասին կմտածեն հետո, յերբ յերկը
անկախությունն ամբողջության ու անտեսակա-
նը վերականգնված կլինի:

Այժմ պետք ե փոքրիկ չայտան:

Փոքրիկ, բայց «անկախ»:

Այդուն կառավարելը հեշտ ե. խոստա-
նում են:

Փոքրիկ բանակ, քիչ ծախք:

Ախալ եր վաղուց չժոտծել այդ մասին:

ՄԵՂԱՎՈՐԸ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՆ ԵՆ:

ՓՈԽԵԼ ՆՐԱՆց:

**ՓՈԽՎՈՒՄ ԵՆ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ու շտապում
հաշտության պայմանը սառարադրելու:**

**Ասոյի ու Ավոյի դեմքերը կրկին պարզում
են:**

ՈԹՈՆԵՐԸ ԹՈԳՆՈՒՄ ԵՆ ՆՐԱՆց ամեն կողմ:

ՓՈՂՈՎԻց ԺՈՂՈՎ, ՄԻԹԻՆԳԻց ՄԻԹԻՆԳ:

**ՀԱՆԿԱՐԾ ողը տաքանում է ու արեի դեմ-
քըն ե շողշողում:**

**Ու հեռու Հյուսիսից Հոկտեմբերն իր ձեռքն
ե պարզում վոտքի հանելու մեր տառապած
ժողովրդին:**

1923 թ. Հունիս—Օգոստո


ՑԵՐԵՎՈՅԻ



ԼՈՒՅԱ ԵՆ ՏԵՍՔՆ ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ

1. ՏԱԽՉԱՆՔԻ ԼԱՐԵՐ. — Արձակ յերգեր
1911թ. Թիֆլիս
 2. ԿԱՐՈՑԻ ՅԵՐԳԵՐ. — Բանաստեղծութ.
1922թ. Յերևան
 3. ԴԵՊԻ ԱԳԱԳԱՆ. — Պատմվածքներ
1923թ. > >
 4. ՆԱԽՈՐՅԱԿԸ. — Կինո—Լենա
- 1923թ. > >

Դիմել. — Յերևան, գրավաճաներին և ՀԵ-
ՂԻՆԱԿԻՆ՝ Կոնդրացենտրո Պечати, Էրևան.



ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Ձերես	Տող	Տպված և	Պիտի լինի
12	վարից	3	«առելուր»
16	վերից	7	«առելուր»
17	»	9	բաժնված
18	վարից	10	ողեվորվում
19	վերից	4	անընդատ
20	վարից	11	ըստ
22	»	9	Գյորգյան
37	»	4	Անքում են
37	»	7	Վագոնիրը
46	»	8	«մեյզաններում» «մեյդաններում»
65	վերից	3	թվերը
69	»	12	սպա—
75	»	1	ատրիներում
93	վարից	9	Մառողերների



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220038842